

ՉԻՆԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՄԻԱ «ՎԷՐԹ» ԿԻՐԱՐԿԵՅԻՆ ՍՈՒՐԻՈՅ ՀՈՒՐՉ ՆԵՐԿԱՅԱՅՈՒԿԱԾ ՕՐԻՆԱԳԻԾԻՆ ԴԵՄ

Չորեքշաբթի, 8 Յուլիս 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Ռուսիա եւ Չինաստանի *Վեթո* կիրարկեցին ՄԱԿ-ի Ապահովության Խորհուրդին յարկէն ներս ոչ-մնայուն անդամներուն՝ Գերմանիոյ եւ Պելճիքայի ներկայացուցած օրինագիծին դէմ: Օրինագիծը կ'ընդգրկէր մէկ տարի եւս մարդասիրական օժանդակութիւնները սուրիական սահմաններէն անցընել առանց սուրիական կառավարութեան արտօնութեան, ինչ որ կը խախտէ Սուրիոյ ապահովութիւնն ու ինքնիշխանութիւնը:



ԹՍՓ ՏԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ, ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ՅԱՂՁԱՆՐԵԼ ԴԺՈՒՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գրող Ղազարոս Աղայեան ըսած է. «Անգործ մնացած հողին վրայ կը բուսնին ամէն տեսակի անպիտան խոտեր, իսկ մշակուող հողը, որ նպատակ ունի շատերուն մտունդ տալ, կը գարդարուի ամէն տեսակի բարիքով»: Միտք բանին՝ աշխատանքն է, որ իմաստ կու տայ կեանքին, յոյս՝ մարդուն, թռիչք՝ երիտասարդութեան: Մարդը հողին, միջավայրին, հայրենիքին կապողն ալ աշխատանքն է, յատկապէս պտղատու աշխատանքը, որ հողը կը գարդարէ բարիքով:



Բարեսիրական միութիւնները այս հողն է որ կը ջանան պարտադրել դարձնել, ոչ միայն օժանդակութիւններ բաշխելով, որբեր խնամելով, այլեւ մարդիկը աշխատանքի մղելով:

Այս նպատակը կը հետապնդէ Նաեւ տնտեսական փոքր ձեռնարկութիւններու ծրագիրը, որ յառաջ կը մղուի Սուրիոյ նախագահական պալատին կողմէ, նախագահ տոքթ. Պաշար ալ Ասատի անմիջական ներդրումով ու հետապնդումով՝ պատերազմէն տակաւ դուրս եկող Յալէպի հողն ալ աշխատանքի բարիքներով գարդարելու հեռանկարով:



Սուրիահայ Օգնութեան Խաչը եղաւ այս ծրագիրին կազմակերպչական աշխատանքները ստանձնող կողմերէն մէկը: Միութիւնը կոչ ուղղեց յատկապէս պատերազմէն ծանր վնասներ կրած արհեստաւորներուն՝ դիմումագրեր ներկայացնելու եւ նիւթական համապատասխան օժանդակութիւն ստանալով իրենց գործը յառաջ տանելու:

Առաջին փուլով, աւելի քան երեք հարիւր հալէպահայ դիմորդներ, ներկայանալով ՍՕԻ-ի փոքր ձեռնարկութիւններու յանձնախումբին, սկսան իրենց յատկացուած գումարները ստանալ եւ գործի լծուիլ:

Այս աշխատանքին եւ բարեսիրական միութիւններու գործունէութեան մղում տալու համար, օրերս Յալէպ կը գտնուէր Սուրիոյ Բարեկարգումի Բարեսիրական Կազմակերպութեան ներկայացուցիչ տիար Ֆարես Զելլէսը:



Ան նախ այցելեց Սուրիահայ Օգնութեան Խաչի ընկերաբժշկական վերանորոգուած կեդրոն, իրագեղ դարձաւ շէնքի վերակառուցման աշխատանքին: Յիշեց, որ սուրիական պատերազմի տարիներուն, զինեալ ահաբեկչական խմբաւորումներ յաճախակի հրթիռակոծման ենթարկելով գրեթէ ակերակի վերածած էին ընկերաբժշկական այս հսկայ կառոյցը: Խաչուհիները աւետեցին, որ մօտերս կեդրոնը շինուի:

Շար.՝ Էջ 8 ➤

ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱԿՆԵՐԱԿԱՆ ՀԱՅԿԵՐՈՅԹ՝ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԵՏ

1923-ին հիմնուած Յալէպի Յայ Ծերանց (հակապատան տունը) այս տարի բոլորեց իր հիմնադրութեան 97-րդ ամեակը եւ հակառակ բոլոր դժուարութիւններուն, մինչեւ օրս կը շարունակէ իր առաքելութիւնը, հոգածութեամբ խնամելով մեր ժողովուրդի անկար տարեցները:



Սարիսա Պողիկեան
 Շար.՝ Էջ 12 ➤

ԿՈՉ ԶԱԼԵՊԱՅԱՅՈՒԹԵԱՆ

Կիրակի, 19 Յուլիս 2020-ին, տեղի պիտի ունենան Սուրիական Յանրապետութեան խորհրդարանի 3-րդ օրէնսդրական շրջանի ընտրութիւնները:

Սուրիական քաղաքացիի մեր պարտականութիւնն է այդ օր, պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ ուղղուիլ քուէատուփ եւ կատարել մեր պարտաւորութիւնը:

Մեր ժողովուրդին ընտրութեան մասնակցութիւնը դիւրացնելու համար հաստատած ենք հետեւեալ կեդրոնները.

- Արամ Մանուկեան Ժողովրդային Տուն, Վիլլաներ
- Ս. Աստուածածին եկեղեցի, Վիլլաներ
- Ազգ. Միացեալ վարժարան, Սիւլէյմանիէ
- Ս. Երրորդութիւն (Չուարթնց) եկեղեցի, Սէյրաֆի
- Տիգրանեան պարտեզ, Նոր Գիւղ
- ՀՄԸՄ պարտեզ, Ազիզիէ

Փափաքողները կրնան իրենց անձնաթուղթերով ներկայանալ յիշեալ կեդրոնները, որոնք պիտի ծառայեն որպէս հաւաքակայաններ, ուրկէ ինքնաշարժներով քուէարկողները պիտի փոխադրուին դէպի քուէատուփ:

Երեսփոխանական ընտրութիւններուն համաժողովրդային մեր մասնակցութիւնը լաւագոյն փաստն է Սուրիական Յայրենիքին նկատմամբ մեր հաւատարմութեան եւ անոր ծաղկումին ու հզօրացման մեր անսակարկ մասնակցութեան:

ԶՈՒԵԱՐԿԵ՛... որովհետեւ ԶՈՒԵՂ ԱԶԳԻԴ ՈՒԾՆ Է...

Դիւան
 Ազգ. Առաջնորդարանի

ԿՈՉ

Կիրակի, 19 Յուլիս 2020-ին տեղի պիտի ունենան Սուրիոյ խորհրդարանական ընտրութիւնները: Ընտրութիւնը իրաւունք է եւ պարտաւորութիւն իւրաքանչիւր քաղաքացիի համար: Ուստի կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի գաւակներուն խիտ շարքերով ուղղուելու քուէատուփ՝ ընտրելու համար ազգի միասնական թելնածու:

Ժիրայր Բէխեանը:

Նոր Սերունդ Մշակութային Միութիւն
 Թեքեան Մշակութային Միութիւն
 Յայ Երիտասարդաց Միութիւն



Խմբագրական

ՍՈՒՐԻԱ-ԻՐԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԶԱՄԱԶԱՅՆԱԳՐԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ

Սուրիա եւ Իրան երեկ ստորագրեցին զինուորական գործակցութեան համապարփակ համաձայնագիր մը, որ կը հաստատէր զոյգ երկիրներու պաշտպանութեան բանակներուն ապահովական եւ զինուորական տարբեր ոլորտներու գործակցութեան ամրապնդումը, ինչպէս նաեւ կողմերու միջեւ ծրագիրներու մշտական համակարգումի ուժեղացումը:

Համաձայնագիրը ստորագրեցին Սուրիոյ պաշտպանութեան նախարար Ալի Ապտալլա Այուպը եւ Իրանի պաշտպանութեան բանակի գլխաւոր շտապի պետ Մուհամետ Պաքիրի: Անոնք մամլոյ միացեալ ասուլիսի մը ընթացքին ապօրինի կերպով Սուրիա թափանցած օտար ուժերուն կոչ ուղղեցին հեռանալու սուրիական տարածքներէն:

Իրանեան բանակի շտապի պետը խոստացաւ նեցուկ կանգնիլ Սուրիոյ հակաօդային պաշտպանութեան համակարգերուն, ապա նաեւ կոչ ուղղեց Թուրքիոյ սուրիական կողմին հետ բանակցելով, համաձայնելով, ոչ թէ Սուրիա թափանցելով լուծելու իր ապահովական հարցերը:

Սուրիոյ պաշտպանութեան նախարարը իր կարգին հաստատեց, որ Սուրիա-Իրան յարաբերութիւնները ռազմավարական նշանակութիւն եւ արժէք ունին, իսկ համապարփակ այս համաձայնագիրը երկու երկիրներու զինուորական գործակցութեան նոր որակ կը հաղորդէ:

Սուրիա-Իրան յարաբերութիւնները տարիներու պատմութիւն ունին: 2018-ին զոյգ երկիրներուն միջեւ կնքուած էր զինուորական այլ համաձայնագիր մը, որով Իրան կը խոստանար աջակցիլ սուրիական բանակի վերակառուցման եւ պաշտպանական արդիւնաբերութեան զարգացման աշխատանքին:

Այս համաձայնութիւնը, սակայն, համապարփակ համարուեցաւ, որովհետեւ զուգահեռեցաւ այնպիսի քաղաքական եւ ապահովական պայմաններու, որոնք կը միտէին շրջանի ողջ քարտեզը եւ ուժերու ազդեցութիւնը փոփոխութեան ենթարկել:

Նման համաձայնագիր այս ժամանակաշրջանին ոչ միայն տարածաշրջանային, այլեւ միջազգային ուղեղծներ կը պարունակէ: Աւելին. ան զինուորական նշանակութենէն անդին, քաղաքատնտեսական նշանակութիւն ալ կը զգենու, յատկապէս ԱՄՆ-ի “Կայսեր Օրէնք”ին եւ Իսրայէլի սուրիական տարածքներուն վրայ գտնուող զինուորական կեդրոններու իրթի-ռակոծումներուն լոյսին տակ հաստատելու, որ դիմադրութեան առանցքը ամուր պիտի մնայ հակառակ սահմանուած տնտեսական պատիժներուն եւ իսրայէլեան յարձակումներուն:

Ուշադրութեան արժանի է Թուրքիոյ ուղղուած կոչը: Իրան եւ Սուրիա կը պնդեն, որ Թուրքիա դուրս պէտք է ելլէ Սուրիայէն եւ վերջ տայ իր զինուորական ներկայութեան:

Իրականութեան մէջ, Սուրիոյ պետութեան հաւանութեամբ իրանեան ուժերու Սուրիա ներկայութիւնը ահաբեկչութեան դէմ պատերազմին սուրիական բանակին յառաջխաղացքին նպաստեց, մինչդէռ Թուրքիան եւ թրքական ուժերը Սուրիա թափանցելով ահաբեկչութիւնը հրահրեցին, սուրիական տարածքներ բռնագրաւեցին, այդ տարածքներու բնակչութեան թրքական լիրայի օգտագործումը պարտադրեցին, Սուրիոյ հարստութիւնները թալանեցին եւ տակաւին միջազգային օրէնքները խախտող շարք մը արարքներով եւ սուրիացի գաղթականներու թղթածրարին օգտագործումով երկրէն տարածքներ գրաւելու եւ ժողովուրդը քայքայելու կը միտին պարզապէս:

Յստակ է վերջապէս, որ Սուրիոյ պատերազմին երկարաձգումով օտար ուժեր կը միտին ուժասպառ դարձնել այս երկիրը զինուորական, տնտեսական եւ մարդկային այլատեսակ սպառնալիքներով: Սուրիա-Իրան այս համաձայնագիրը պիտի ամրապնդէ Սուրիոյ պաշտպանութեան համակարգը եւ զինուորական, քաղաքական ու տնտեսական ճնշումներու դէմ պատուար մը պիտի հանդիսանայ Սուրիոյ համար:

«Գ.»

-Սուրիոյ Արաբական Հանրապետութիւնը եւ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը զինուորական եւ ապահովական համապարփակ գործակցութեան համաձայնագիր ստորագրեցին:

Յետ բազում բանակցութիւններու, համաձայնագիրը Սուրիոյ կողմէ ստորագրեց պաշտպանութեան նախարար զօրավար Ալի Ապտալլա Այուպ, իսկ Իրանի կողմէ՝ շտապի պետ զօրավար Մուհամետ Պաքիրի:



Այս առիթով իրապարակուած միատեղ յայտարարութեամբ շեշտուած է երկու երկիրներուն գործակցութեան կարելորութիւնը՝ պայքարելու տարածաշրջանային ու միջազգային կարգ մը երկիրներու հովանաւորութիւնը վայելող հաւատարմողական եւ ահաբեկչական խմբաւորումներուն դէմ:

-ՍԱՆԱ.- Թրքական իշխանութիւնները Սուրիոյ մէջ ահաբեկչութեան զօրավիգ կանգնելով, իսկ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան սուրիացի տեղահանուածներու քարտը յանուն Թուրքիոյ տնտեսական շահերուն Եւրոպայի դէմ օգտագործելով չեն բաւարարուած:



Սպանուած գաղթականներուն անդամները առեւտուրի սեւ ցանցերուն մէջ օգտագործելու, տակաւին թերահաս սուրիացի աղջիկներու բռնի ամուսնութիւններու եւ բռնաբարումներու տխուր պատմութիւններով յագեցած է Թուրքիոյ մէջ սուրիացի գաղթականներուն առօրեան:

Իրաւաբանական կազմակերպութիւններ թրքական իշխանութիւնները զգուշացուցած են սուրիացի թերահաս աղջիկներու նիւթական դժուարութիւնները օգտագործելով թուրքերու հետ բռնի ամուսնացնելու երեւոյթէն: Թերահաս աղջիկներու շահագործման հարցերով հետաքրքրուող ACBET կազմակերպութիւնը Բրիտանիոյ «Ինտիփէնտընթ» թերթին մէջ իրապարակած է տեղեկագիր մը, ուր լուսարձակի տակ առած է սուրիացի գաղթական թերահասներու թուրքերու հետ ամուսնութիւնը, անոնց ընտանիքներուն յատկացուող որոշ գումարներու փոխարէն: Կազմակերպութիւնը ողբերգական համարած է տան վարձքի կամ օրական սնունդի ապահովման համար Թուրքիոյ մէջ սուրիացի գաղթականներուն նման միջոցներուն դիմելու հարկադրանքը եւ դատապարտած է թրքական իշխանութիւնները՝ գաղթականներու թղթածրարը օգտագործելով եւ մեծ գումարներ գանձելով մէկտեղ, տեղահանուածները այս աղէտալի վիճակին մատնած ըլլալուն համար:

-Երկուշաբթի, 6 Յուլիս 2020-ին, Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ պսակածեւ ժահրով վարակուած 14 նոր պարագաներ արձանագրուեցան, իսկ վարակուած մը մահացաւ: Այսպիսով Սուրիոյ մէջ պսակածեւ ժահրով վարակուածներուն թիւը կը հասնի 372-ի, մահացածներունը՝ 14-ի, իսկ բուժուածներունը՝ 126-ի:

Մահացած	Բուժուած	Վարակուած
14	126	372

-Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով Զորքշաբթի, 8 Յուլիսին շեշտեց, որ սուրիական ճգնաժամին առնչուող հարցերը պէտք է լուծուին միայն փաստացի տուեալներու հիման վրայ, սակայն ՄԱԿ-ի այն յանձնաժողովը, որ՝ «*իւրզիւք կ'անուանէ Սուրիոյ հետաքննութեան անկախ յանձնաժողով*», այդ պայմանը չ'ամբողջացներ:



Լուրեր Հայաշխարհին

ՀՅԴ ՊՄ ՄՈՅ-Ի ԳՐԱՏԵՆԵԱԿԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱՉՄԻՆ ՍՓԻԻՔԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԳԼՆԱԽՐ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՏԵՆԵԱԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Գերագոյն Մարմինի արտաքին քաղաքականության, սփիւռքի եւ հայրենադարձության հարցերու Մասնագիտական Ոլորտային Յանձնախումբը հրապարակած է հետեւեալ հաղորդագրութիւնը.

«6 Յուլիսին ՀՀ կառավարութեան կայքում հրապարակուել է ՀՀ վարչապետի որոշումը, որով եական փոփոխութիւններ են մտցուել վարչապետի աշխատակազմի Սփիւռքի գործերի գլխաւոր յանձնակատարի գրասենեակի կանոնադրութեան մէջ:

Փոփոխութիւնները վերաբերում են գրասենեակի նպատակներին, խնդիրներին, գործառնություններին եւ կառուցուածքին: Առաջին մասում դրանք խոշոր հաշուով խմբագրական բնոյթ են կրում, իսկ ինչ վերաբերում է կառուցուածքին, ապա այստեղ եական փոփոխութիւններ են կատարուել:



Մասնաւորապէս դադարել է Եւրոպայի հայ համայնքների վարչութեան, Ամերիկայի հայ համայնքների վարչութեան, ԱՊՀ հայ համայնքների վարչութեան, Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայ համայնքների վարչութեան, Մերձաւոր Սփիւռքի հետ կապերի վարչութեան, հայրենադարձութեան եւ հետազօտութիւնների վարչութեան, համահայկական, միջազգային եւ եկեղեցական կառույցների հետ կապերի վարչութեան գործունեութիւնը:

Ստեղծուել է օրէնսդրական նախաձեռնութիւնների եւ ռազմավարութիւնների մշակման վարչութիւն, իսկ Սփիւռքի ներուժի հաշուառման եւ տեղեկատուական վերլուծութիւնների վարչութիւնը եւ Սփիւռքում տեղեկատուական ռազմավարութեան մշակման եւ իրականացման վարչութիւնը միաձուլուել են, արդիւնքում ստեղծուել է Սփիւռքի ներուժի քարտեզագրման եւ ներգրաման վարչութիւն:

Համահայկական ծրագրերի վարչութիւնն անուանափոխուել է ծրագրերի իրականացման եւ մշտադիտարկման վարչութեան:

Արդիւնքում, Սփիւռքի գործերի գլխաւոր յանձնակատարի գրասենեակը ներկայումս ունի մասնագիտական-կառուցուածքային հետեւեալ ստորաբաժանումները.

1. Սփիւռքի ներուժի քարտեզագրման եւ ներգրաման վարչութիւն
2. Ծրագրերի իրականացման եւ մշտադիտարկման վարչութիւն
3. Օրէնսդրական նախաձեռնութիւնների եւ ռազմավարութիւնների մշակման վարչութիւն:

Վերոգրեալի առթիւ, ընդգծում ենք հետեւեալ շեշտադրումները.

1. Վարչապետի կողմից Սփիւռքի գործերի գլխաւոր յանձնակատարի գրասենեակի կանոնադրութիւնը հաստատուել է 2019 թուականի Յունիսի 1-ի որոշմամբ: Ստացուել է, որ առաւել քան մէկ տարի յանձնակատարի գրասենեակը գործել է ներկայ իշխանութիւնների կողմից այդքան քննադատուող նախկին Սփիւռքի Նախարարութեան ճիշդ նոյն կառուցուածքով: Հարց է առաջանում, Սփիւռքի Նախարարութեան, իշխանութիւնների տեսակետով՝ անարդիւնաւետ գործունեութեան պայմաններում, ինչո՞ւ է դրա կառուցուածքը պահպանուել առաւել քան մէկ տարի, երբ նման որոշման կայացումը բաւական կարճ ժամանակ ենթադրող վարչական աշխատանք է: Սա կարող է խօսել ոլորտում առկայ համակարգուածութեան եւ հետեւողական աշխատանքի բացակայութեան մասին:

2. Թէեւ գովելի է այն փաստը, որ ինչպէս նախկին, այնպէս էլ ներկայ կարգաւորումներում կարելորուել է Սփիւռքի համայնքային կեանքի գարգացման, ազգային ինքնութեան պահպանման եւ համահայկական խնդիր-

ԻՇԽԱՆ ՍՏՈՒԹԵԼԵԱՆ. «ՀՅԴ-ԲՀԿ-ՀԱՅՐԵՆԻՔ ԵՌԵՆԱԿԻՆ ՄԵՋ ԴԱԵՐ ՊԵՏՔ ԶԷ ՓԱՏՈՒԷԼ ԱՄԵՆ ԲԱՆ ՀՐԱՊՈՐՏԱԿԱՅԻՆ ԶԵՐՈՎ ԸՆԹԱՅՆՍԵ Է»

24TV-ի «Հարցազրոյց» հաղորդումի ընթացքին ՀՀ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ իշխան Սաղաթելեան ըսած է, որ ՀՀ-ն



երկրին մէջ տիրող վիճակը աղէտալի կը գնահատուել՝ ընդգծելով, որ քաղաքական ու կառավարման ճգնաժամը կարելի է յարթահարել միայն արտակարգ ընտրութիւններու ճամբով:

Սաղաթելեանի համաձայն, իշխանութիւնները պսակաձեւ ժահրի համաճարակին դէմ պայքարին

մէջ անկարող են եւ մեղաւոր՝ ստեղծուած վիճակին ի տես:

Անդրադառնալով ՀՀ-ԲՀԿ-Հայրենիք եռեակի ապագայ ծրագիրներուն, ան յայտնած է, որ պսակաձեւ ժահրին պատճառով աշխատանքները դանդաղած են, բայց աշխատանքային խումբը յառաջիկայ ծրագիրներուն մասին շուտով յայտարարութիւններ պիտի կատարել:

Ների լուծման գործում համահայկական կառույցների դերակատարութեան բարձրացումը, այնուամենայնիւ խիստ տարակուսելի է այն, որ յանձնակատարի գրասենեակի կանոնադրական փոփոխութիւնները պատշաճ ձեւով չեն քննարկուել սփիւռքեան տարաբնոյթ կազմակերպութիւնների հետ: Իշխանութիւնների այսպիսի գործելաճը կարող է վտանգել գրասենեակի կանոնադրական նպատակների իրագործումը, քանի որ դրանք նախ եւ առաջ ենթադրում են գործընկերային յարաբերութիւններ ու սահուն փոխգործակցութիւն սփիւռքեան եւ կամ համահայկական կազմակերպութիւնների հետ:

3. Խիստ կասկածելի է նաեւ այն, թէ արդէ՞ ո՞ք մասնագիտական-կառուցուածքային ընդամենը երեք ստորաբաժանումները կարող են արդիւնաւետօրէն սպասարկել գրասենեակի առջեւ դրուած նպատակներին, գործառնություններին ու խնդիրներին: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ինչպէս ցանկացած Սփիւռք, հայկական Սփիւռքը եւս միատարր չէ: Հայկական Սփիւռքի համայնքները իրարից տարբեր են, տարբեր են նաեւ հասարակական, ընկերատնտեսական եւ քաղաքակրթական այն տարածքները, որտեղ դրանք ձեւաւորուել են գործում են: Տարբեր են համայնքների քաղաքականացուածութեան մակարդակները, համայնքային կազմակերպութիւնների գործելաճը, եւ վերջապէս, ընդունող երկրների՝ էթնիկ համայնքներին վերաբերող քաղաքականութիւնները: Այս առումով, գտնուել ենք, որ տարածաշրջանային կտրուածքով կառուցուածքի վերացումը խիստ անարդիւնաւետ քայլ է:

Միաժամանակ, անկախ հայրենական իշխանութեան բնոյթից եւ Սփիւռքին վերաբերող քաղաքական շեշտադրումներից՝ ՀՀ Դաշնակցութիւնը վերահաստատում է իր յանձնառութիւնն առ այն, որ ամբողջ աշխարհում շարունակելու է իր հայապահպան քաղաքականութիւնն ու հայկական իրաւունքների եւ շահերի պաշտպանութիւնը, իսկ Հայաստանի ու Արցախի Հանրապետութիւններում՝ շարունակելու է աջակցել հայրենադարձութեանը:

ՀՀ Հայաստանի Գերագոյն Մարմինի Արտաքին Զաղաքականութեան, Սփիւռքի եւ Հայրենադարձութեան Հարցերի Մասնագիտական Ոլորտային Յանձնախումբ 08.07.2020 թ.

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Նախկանտեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՎԱԼԱՆԳԻՆ ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 12 Յուլիս 2020-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլյաներ-Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալներ

ԱՐՏԱԲԱԶԴ ՏՆԿԻԿԵԱՆԻ (ԱՊՈՒ ԱԶԻԶ)

15-րդ տարելիցի

Եւ ԲԵՆԵԼՈՒԲ ՏՆԿԻԿԵԱՆԻ

10-րդ տարելիցի

Հանգուցեալներուն հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 12 Յուլիս 2020-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի՝ Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցոյ մէջ, Սալիպէ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս:

ԶԳՈ՛ՅՃ, ՉԲԱՐԿԱՅՆՆԵՆՔ ՀԱՅՐԵՆԱՄԵՐ ԱՐԲԱՀԱՄՆԵՐՈՒ ՏԵՍԱԿԸ Ի հետևում ոստիկանության ArmNews այցելության առնչուող Աբրահամ Գասպարեանի ելույթին



Ժան Չալյան

ArmNews-ի հաղորդավար Աբրահամ Գասպարեանի «Երեկոյան Լուրեր» հեռարձակումով տեղեկացանք, որ ոստիկաններ «անմեղ այցելություն» մը տուած են պատկերասփիռային կայանի իր գրասենեակը: Առիթը, յիշեցման կարգով, եղած է հաղորդավարին ուշադրության յանձնել երեւոյթ մը, «քաղաքավար խնդրանք» ի տարագով, որուն համաձայն պետք է յարգուին թագածահրի հակահամաճարակային ձեւաչափերը: Կը տեսնէ՞ք, հայերս որքա՞ն լուրջի առած ենք այս փորձանքը, անոր համապատասխան գանձան եզրոյթներով՝ թագավարակ, քորոնավիրուս... հանրութեան ուշադրութեան յանձնած այս վարակին ահեղութիւնը:

Առարկայական փաստացի տուեալներով, հարցերու անաչառ ներկայացումներով, Աբրահամ Գասպարեան, ինչպէս միշտ, այս անգամ եւս, պարզեց արիեստավարժ մարդու նկարագիր, ու համապատասխան եղանակով՝ հարցերը ընկալելու իր իւրայատուկ սուր տրամաբանութեամբ ու ժամանակագրական տուեալներով, անվիճելի առարկայութիւններով, պարզ եց այն պատկերը, որ այցելուներու «Գործին» նպատակը, խաղողը ուտել չէր, այլ քաղաքակիրթ եղանակով՝ այգեպանը ծեծել:

Արդ, երբ կը հետեւինք միջազգային լրատուամիջոցներուն, պարտադիր հանգամանք չենք նկատեր փակ *սթուտիո*ներու մէջ, բերան ու քիթ ծածկելով լուր հաղորդելը: Վերջին հաշուով, լսելի ու տեսանելի փոխանցուելիք պատգամը ամբողջական չ'ըլլար, եթէ դիմակ կրես ու քողարկես դէմքիդ արտայայտութիւնները, ձայնային ելեւելները խեղդես:

Դիմակը ինքնութիւն չբացայայտելու միջոց ճանչցուած էր ժամանակին, արտայայտութիւն ու դիմագիծերը քողարկող միջոց: Այսօր, սակայն, դարձած է մարդկութեան փրկութեան հիմնական տարրը: Ո՛վ գարմանալի:

Արդեօ՞ք ոստիկանութիւնը անտեղեակ էր, որ կայանը այլ մօտեցումներով գօրավիճ է պետական ցուցմունքներուն եւ իր եթերին մէջ 2020-ական ժամեր տրամադրած է պետական արժեքափերով առաջնորդող ծրագրներու ու տեսանելի օրինակներով սփռած է այդ տուեալները: Իսկ առանց դիմակի հաղորդում վարելը իբրեւ օրենքի խախտում ներկայացնելը արժանի է օրինապահներու միջամտութեան: Այս հանգամանքը պատկերասփիռի նշեալ կայանի դիտողներուն կողմէ հալած իւրի պէս կող տրուելով՝ պարզապէս միամտութիւն պիտի սեպուի:

Չեզնական է մտածել, թէ կարգ մը գիտնականներնա՞ն ենթադրած են, թէ ուղիղ սփռումով ալ հաւանական է ժահրի փոխանցումը, առ

այդ, օրինապահները նախագուշական որպէս քայլ, թելադրիչ հանգամանքով, «մտերմիկ այցելություն» մը տուած են նշեալ կայանի պատասխանատուներուն:

Անոնք որոնք հասակ առած են մենատիրական երկիրներու մէջ, իմա՝ խորհրդային Չայաստան, նմանօրինակ ոստիկանական գոր-



ծուղման առաքելութիւնը լաւ կը հասկնան, ու դժուար չէ իրենց համար հասկնալ նամակի մը պարունակութիւնը, սո՛սկ կարդալով վերնագիրը, անոնք «կը մարսեն» ամբողջ պատգամը, առանց խորանալու տողընդմէջ քողարկուած «չարածիութեան» մէջ անգամ:

Աբրահամի եւ օրինապահներու գրոյցին առանցքը հանրային եւ ընկերային հարցերն են: «Այցելուները» ամէ՞ն ինչ «նորմալ ա՛ գնում» գնահատականով եզրափակած են իրենց առաքելութիւնը:

Այս մօտեցումը, պարզապէս հակուրութիւն է, չայլամի մօտեցում: Գէթ փակ դռներու ետին կարելի է աւելի՛ սրտբաց գրուցել, հեռու մնալով արջի ծառայութիւն մատուցել իշխանաւորին, եւ հեռանալով ինքնախաբէութեան օրինակներով առաջնորդուելու փորձութենէ:

Անձնապէս, ապրած ըլլալով 90-ական թուականներու հայաստանեան իրադարձութիւնները, մտաբերելով ազգային գաղափարախօսութեան առաջադէմ կուսակցութեան մը հանդէպ պարսաւանքներու օրերը, մտաբերեցի տուեալ կուսակցութեան գրասենեակներ օրինապահներու տմարդի «այցելութիւնները», որոնց արդիւնքով ալ Չայրենիքի տարածքին, ազգային հարթակի վրայ յառաջացած անհաճոյ խառնիճաղանճը:

Աժան մարտավարութիւն է ձախաւերութիւնները ուրիշին վրայ բարդելը՝ չտեսնելով աչքիդ գերակ: Այս իմաստով, հանդէս պիտի չգամ «ուշաքան» եւ «մշակուած» պետական քաղաքականութեան դէմ՝ կասեցնելու համաճարակի տարածման կարելիութիւնները: Այլ մօտեցումով պատկերասփիռի օրակարգը կարելի էր վերածել ազգային միասնութեան եւ երկխօսութեան լաւ առիթի մը, ու չէ կը կարծեմ: Այս նիւթին դիմատետրի էջիս վրայ նշմարով մը անդրադարձած եմ եւ հոն արձանագրած գնահատական-

ներս: Սակայն, այսօրուան Armnews-ի օրինակով ներկայացուած մթնոլորտը այլ բան կը յուշէ: Աբրահամին ուղղուած «նամակը» ընդդիմախօսի դոյզն իսկ ձայնը լսելու հանդուրժողականութեան պակասին արդիւնքն է:

Զեմ ուզեք թաքցնել առեւտրարձանագրած վերապահութիւններս, հանդէպ այն անձնաւորութեան, որ ճարտարօրէն օգտուեցաւ ժողովուրդի արդար ցատումէն, ու ի տես ընկերային արդարութիւն եւ օրինական համակարգ պահանջող քաղաքական ազդեցիկ շրջանակներու նօսր ներկայութեան, ճարտարօրէն կրցաւ կանգնել ամբոյսի գլխուն

ու առաջնորդել «ՅԵՂԱՓՈՒՆԻԹԻՒՆԸ»: Ան վարպետօրէն ձեւաւորուած ծածկում հագուստը (camouflage), իր BACKPACK պայտուակը, վիրաւոր ձեռքի փաթեթը պատռանքով միմոսեց ԶԵ Կիվարայի հայկական Նոր կերպարով մը, ու յաջողեցաւ համախմբել ժողովրդային հոծ բազմութիւնը, որ ծարաւ էր անարին իշխանափոփոխութեան եւ օրենքի գերակայութեան ամրակայման:

Այսպէս, հայ ժողովուրդը, իր մեծամասնութեամբ, անվարանօրէն միացաւ շարժումին, յիշեցնելով որ անսակարկելի պահանջք է, որ գոյաւորուելիք Նոր իշխանութիւնը հեռու պահէ տղուկի իւրայինները եւ թալանչիները քաղաքական-տնտեսական ազդեցութեան գօտիներէն, ու միայն արժանաւորը եւ անբիծ քաղաքացին՝ տերը ըլլայ երկրի օրենքի տնօրինման օղակներուն:

Այս ամէն տեսանելի արկղերը հասան այն տեղը, ուր յոգնած քաղաքացին, կեղեքիչներու ու հարստահարողներու փաղաքէն ազատելու ճաճանչող առիթ մը տեսաւ այս տարերային շարժումին մէջ «ԴՈՒՆՈՎ» աղաղակեց՝ տատկներով, մամիկներով, գաւակներով, թռռներով ու ծռռներով միանալով հարիւր հազարնոց հանրապետներուն: Արդարօրէն, հայ ժողովուրդը յոյսի ճրագ մը տեսնելով փայլփլոյ յօգուցներուն մէջ, քայլ մը առաջ ուղղուելով իր սայլը կապեց ԵՂԱՓՈՒՆԻԹԻՒՆԸ, պարուրելով կառքը ԹԱԻԻԾՈՎ ու Նոր Չայաստանի սպասումներով:

Քաղաքակիրթ Չայաստանի կերտման ի խնդիր, այսուհետեւ, ոստիկանական «բարի կամեցողական այցելութիւնները» պետք է անհետանան քաղաքացիի կեանքէն: ՕՎԻՐԸ պետք է մնայ խորհրդային պատմութեան մութ էջերուն մէջ միայն: Փոխարէնը՝ պետք է համարարած տեսնել առողջ քննադատութիւնը, մամուլի ազատութիւնը, քաղաքացիի անկաշկանդ կողմնորոշումը, որոնք դեղատոմսեր են գոյաւորուած առողջ հասարակութեան աճին եւ քաղաքական ազնիւ մրցակցութեան ամրակայման:

Չետեւաբար, ի տես այս բոլորին, այսուհետեւ օրինապահները զգուշաւորութեամբ պետք է մտնեն ARMNEWS-ներու հարթակ, որովհետեւ բարեհաճ ու նրբիկ արտայայտութիւնները Աբրահամներու, պետք չէ շահարկել որպէս անկարողականութիւն կամ բացատրել մեղկութեամբ: Այդ կարծեցեալ մեղկութեան տակ անթեղուած է Միտրի ըմբոստ ոգին, որ իր պարանոցը չի խոնարհեցնէր եւ ազատութեան ու արդարութեան ձեռքբերման սիրոյն կը մաքառի մինչեւ շունչը վերջին:

Իշխանաւորները նախագուշակական կրակոցներու լեզուով չկըրցան լռեցնել ընդդիմախօս նման կայաններու ձայները: Աբրահամները, իրենց հետեւողական արիեստավարժ ելույթներով, խորթ գաւակները չեն իրականացած եղափոխական մթնոլորտներուն: Սա կը հաստատուի իրենց սաստումով, թէ որքա՞ն սեղմեք պարանոցին օղակը՝ քաղաքացիին անկաշկանդ արտայայտուելու ցանկութիւնը, տարբերութիւն պիտի չընէ հայրենապաշտ մարդուն համար, որովհետեւ նման քաղաքացիին համար, Նոյնիսկ կախաղանը պիտի վերածուէր այն օրորոցին, ուր պիտի ծնէր արդարութեան երկունքով տարութերող հայ քաղաքացին:

Մե՛ղք է: Պէտք է խնայել ընտիր թաւիչը, որպէսզի ան չթաթխուի արատաւոր ժահրերու:

Աբրահամները հայրենիքի սիրոյ չափը ամփոխվարական եւ զգացական խանդավառութեամբ չեն ընկալել: Այդ Նոյնիսկան տեսնել արմատացած է իրենց եւութեան մէջ:

Աբրահամները խիզախ, անկոտորում կամքի ու իմաստալից խօսքի դպրութեան լաւագոյն ներկայացուցիչներն են: Իրենց մահկանացու անձերուն ընդմէջէն, իրենց առօրեայ կենցաղով ու պահուածքով, բոլորիս համար այնքա՞ն ուսանելի երեւոյթներ են, որոնց կ'արժէ պահեր տրամադրել ու խոկալ: Անոնք մէկ յստակ պատգամով կը շեշտեն, որ հայրենասիրութիւնը միայն լոգուք չէ, այլ ապրում է ու հաւատը:

Այո, մե՛նք ալ կ'երկրորդենք վարչապետին այսօրուան այն հաստատումը, որ՝ «Քաղաքացիների վարքի փոփոխութեամբ կարելի պիտի ըլլայ յարթահարել այս ճգնաժամը»: Բայց կ'աւելցնենք, որ հակահամաճարակային կանոններու խախտումները պետք է որոնել արհամարհանելու դէմքերու ծածկոյթներէն անդին:

Այսօր արհամարհանելը «ի գիտութիւն» ընդունեցին ոստիկանական ազդը, բայց այս ոճը պետք չէ քաղաքական բռնազբօսիկ վարակով թաթխուած որպէս շիճուկ ներարկել հանրային-հասարակական կեանքին մէջ եւ այդ հանգամանքը ընդունիլ որպէս բուժիչ դեղատոմս:

Գերագգասիրութեամբ սնանած Աբրահամներու տեսակը մի՛ բարկացնէք: «Դուխով»:

Յ. Գ.: Նշուած հաղորդումը կարելի է դիտել այս կապով: https://www.youtube.com/watch?time_continue=2&v=zDt_sN26rqc&feature=emb_logo

ՀԱՐԻՒՐԵՐՈՐԴ...

Ժիրայր Դանիելյան

1966 թուականի Յունուարին, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Յասկ» պաշտօնական ամսագիրը «Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ» խորագիրին տակ կը ծանուցանէր հետեւեալը.-



Գեորգ Մելիտինեցի

«Յիւսիսային Ամերիկայի հայ պատուական ազգայիններէն Տիար Գեորգ Թօփալեան (գրական անունով՝ Գ. Մելիտինեցի) եւ իր կինը՝ ազնուափայլ Տիկին Նարդուհի, հաստատած են գրական մրցանակ մը հետեւեալ տրամադրութիւններով եւ առաջադրութիւններով» (տե՛ս «Յասկ», 1966, էջ 25):

Վերելի արձանագրութեան կը հետեւի 20 յօդուածներ բաղկացած կանոնագիր-ծրագիր մը, թէեւ այս բնորոշումը չէ նշուած ո՛չ «Յասկ»ի յիշատակուած համարին եւ ոչ ալ 1970-ին Անթիլիասի տպարանէն լոյս ընծայուած եւ «Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ» խորագրուած 15 էջանոց հայերէն եւ անգլերէն գրքոյկին մէջ:

Մրցանակին հիմնական նպատակն էր՝ քաջալերել հայ գրողներն ու անոնց մրցանակի արժանացած երկերը ո՛չ միայն հրատարակել, այլեւ կիթական պարգէ մըն ալ տալ անոնց հեղինակներուն:

Նոյն այս ամուլը 1973-ին երկրորդ նուիրատուութեամբ մը կը հաստատէր երկրորդ հիմնադրամ մը՝ «Գեորգ Մելիտինեցի Վերահրատարակման Գիմնադրամ» անունով, որ կը նպատակադրէր ապահովել «Յայ մշակոյթի համար արժէք ներկայացնող հրատարակուած եւ սպառած գործերու վերահրատարակութիւնը»:

Երկրորդ հիմնադրամի հաստատումէն ետք, կարճ շրջան մը, հրատարակուած հատորները կը կրէին «Յրատարակութիւն Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի եւ Վերահրատարակման Գիմնադրամի Յանձնաժողովի» արձանագրու-

թիւնը: Ապա՝ կրկին՝ «Յրատարակութիւն Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի»:

Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի հիմնադիր բարերարին փափաքով կազմուած առաջին դատակազմի անդամները եղած են՝ Գարեգին Եպս. Սարգիսեան, Ներսէս Ծ. Վրդ. Բախտիկեան, Կարո Սասունի (ատենապետ), Բիւզանդ Եղիայեան (ատենադպիր), Բարգէն Փափագեան, Զրաչ Տասնապետեան եւ Պօղոս Սնապետեան:

Յաջորդող տարիներուն դատակազմի անդամները, զանազան պատճառներով, փոփոխութեան ենթարկուած են, օրուան կաթողիկոսին տնօրինումով, խորհրդակցաբար բարերարին հետ: Ատենապետի պաշտօնը յաջորդաբար վարած



Առաջին հրատարակութիւն

են՝ Կարո Սասունի, Զրաչ Տասնապետեան, Պօղոս Սնապետեան, Գեորգ Գանտահարեան, Պէպօ Սիմոնեան, Ժիրայր Դանիելյան (այժմու):

1966-ին հիմնուած Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի առաջին հրատարակութիւնը կ'ըլլայ Մուշեղ Իշխանի «Տառապանք» քերթուածներու հատորը (1968), որուն, նոյն տարին, կը հետեւին երկու այլ հրատարակութիւններ:

1968-էն ի վեր անցած են 52 տարիներ: Այդ տարիներու ընթացքին, հակառակ Լիբանանը հարուածող բազմաթիւ աղետներուն, անդու շարունակեց բանիլ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մամուլը եւ լոյս ընծայել թանկարժէք հրատարակութիւններ:

Նոյն հետեւողականութեամբ շարունակուեցան լոյսին գալ Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակին արժանացած գրական, պատմական, մշակութային գործեր, նաեւ վերահրատարակուիլ «սպառած եւ Զայ մշակոյթի համար արժէք ներկայացնող» հրատարակութիւններ,

ինչպէս նշուած է 1973-ին պատրաստուած եւ հրատարակուած «Միացեալ Կանոնագիր»ին մէջ:

Այսօր, 2020 թուականին, Կաթողիկոսարանի տպարանէն լոյս կը տեսնէ Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի հրատարակութեանց ԶԱՐԻՒՐԵՐՈՐԴ, որ ծանօթ բեմադրիչ եւ թատերագիր Վաչէ Ատրունիի «ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒ ԼԵՌՆ» թատերգութիւններու հատորն է:

Շարքը երկար է այն հեղինակներուն, որոնց գրական ու այլազան գործերը լոյս տեսած են այս մրցանակին կողմէ, իբրեւ վերահրատարակութիւն եւ նոր հեղինակութիւն:

Եթէ բոլոր անուններու յիշատակութիւնը երկար, շատ երկար պիտի ըլլայ, սակայն, պիտի փորձեմ ներկայացնել անոնցմէ ծաղկաքաղ մը:

ա) Վերահրատարակուած հեղինակներ.- Գրիգոր Նարեկացի, Կոստան Չարեան, Յակոբ Օշական, Արամ Զայկազ, Բենիամին Թաշեան, Նիկողոս Սարաֆեան, Վախթանգ Անանեան, Օհան Կարօ, Արշակ Ա. Ալպոյաճեան:

բ) Ծանօթ հեղինակներ.- Մուշեղ Իշխան, Նշան Պէշկաթաշլեան, Մարտիրոս Միլասեան, Պօղոս Սնապետեան, Արմէն Դարեան, Վահէ Օշական, Սմբատ Փանոսեան, Եղուարդ Տասնապետեան, Եղուարդ Պօյաճեան, Աբրահամ Ալիքեան, Գրիգոր Պըլտեան, Արսէն Երկաթ, Բարգէն Փափագեան, Յակոբ Մնձուրի, Նուպար Չարխուտեան եւ ուրիշներ:

գ) Նոր անուններ.- Վարանդ, Վարդան Մատթոսեան, Փանոս Ծերանեան, Յակոբ Նալպանտ, Մարուշ Երամեան, Յակոբ Միքայելեան, Գեորգ Եագըճեան, Չօհրապ Գիրեջեան, Արա Արծրունի, Յակոբ Սարգիսեան, Յակոբ Աղամեան, Շուշիկ Տասնապետեան, Յակոբ Պալեան, Չաւեն Մսրըլեան, Խաչիկ Խաչեր, Պերճուհի Աւետեան, Ալեքսան Պերճիքլեան, Կարօ Աբրահամեան, Գառնիկ Գալստեան եւ ուրիշներ:

դ) Թարգմանական եւ օտարալեզու գործեր.- Դանիէլ Վարուժան, J.M. Thierry, Apig Zorian, Zaven Messerlian, Arch. Gorun Babian, Իտա Ալեմետտին, Իպրահիմ ալ Խալիլ, Զեմալ Եալչըն, Լեօ Թոլստոյ:

Երբ 1995-ին Արամ Ա. Կաթողիկոս կը դառնայ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին գահակալը, իր այլազան շինարարական ու մշակութային գործունէութեանց առընթեր եւ բազմազաղ վիճակին, յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ Կա-

թողիկոսարանի հրատարակչական գործունէութեան: Նորին Սրբութեան գահակալութեան օրերուն կ'աւելնայ թիւը հրատարակչական հիմնադրամներուն, որոնցմէ իւրաքանչիւրը կ'առաջնորդուի յատուկ յանձնախումբով: Վեհափառ Զայրապետը անձնապէս կը նախագահէ գրեթէ բոլոր ժողովներուն եւ իր իմաստուն խորհուրդներով ու թելադրանքներով մեծապէս օգտակար կը հանդիսանայ անոնց աշխատանքներուն:



Հարիւրերորդ հրատարակութիւն

Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի հարիւրերորդ հատորի լոյս ընծայման առիթով կ'արժէ, որ արձանագրուի հետեւեալ իրողութիւնը:

1968-ին, ինչպէս նախապէս նշուեցաւ, Գիմնադրամի առաջին գիրքը լոյս տեսած է: Մինչեւ 2020, անցնող 52 տարիներու ընթացքին հրատարակուած գիրքերուն թիւը հասած է հարիւրի: Այդ հարիւր գիրքերէն 74-ը, շուրջ երեք չորրորդը, լոյսին եկած է Արամ Ա. Կաթողիկոսի գահակալութեան 25 տարիներու ժամանակաշրջանին: Պատահած է նաեւ, որ մէկ տարեշրջանին՝ 5, 6, 7 եւ 8 գիրքեր լոյս տեսած ըլլան: Մէկ խօսքով՝ Արամ Ա. Կաթողիկոսի գահակալութեան տարիները բերքառատ եղած են հրատարակչական մարզէն ներս նաեւ:

Այսօր Կաթողիկոսարանէն ներս կը գոյատեւեն Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակն ու հրատարակչական 3-4 այլ հիմնադրամներ: Պէյրուսի մէջ գոյութիւն ունին հրատարակչական ուրիշ հիմնադրամներ եւս: Ուրեմն հայ գրողը դժուարութիւն չունի իր գիրքերուն հրատարակութիւնը ապահովելու: Պայմանաւ որ անոնք հրատարակութեան արժանի գործեր ըլլան:

www.kantsasar.com
www.kantsasar.com
www.kantsasar.com

ԲԵՐԻՈՅ ԶԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԸ. Տ. ՄԱՍԻՍ ՍՐԲ. ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆԻ ՇԱԲԱԹՈՒԱՆ ԶԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

- Զինգշաբթի, 2 Յուլիս 2020-ի առաւօտուն, Բերիոյ Զայոց Թեմի Բարեւոյցի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան իր մասնակցութիւնը բերաւ Զալէպի ուղղափառ եկեղեցիներու համայնքապետներու անդրանիկ ժողովին, ասորի ուղղափառ եկեղեցւոյ առաջնորդարանէն ներս:

Ժողովին ներկայ գտնուեցան հայ առաքելական, ասորի ուղղափառ եւ յոյն ուղղափառ եկեղեցիներու հոգեւոր առաջնորդները, իրենց ընկերակցող հոգեւորականներով:

Առաջնորդ Սրբազան Զօր կ'ընկերակցէր Առաջնորդի Օգնական Զոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեան եւ Արժ. Տ. Գառնիկ Զինյ. Չափանեան:

Ժողովին արժարձուեցան համայնքները յուզող եկեղեցական եւ ընկերային գանազան հարցեր:

- Զինգշաբթի, 2 Յուլիս 2020-ին, Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տեր Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան իր մասնակցութիւնը բերաւ Զայ Ծերանոցի հնամակալութեան եւ Տնօրէնութեան հետ գումարուած ժողովին՝ Զայ Կաթողիկէ Զամայնքի Առաջնորդարանէն ներս, ընկերակցութեամբ Առաջնորդի Օգնական Զոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեանի: Ժողովին ներկայ գտնուեցան հայ երեք համայնքապետները:



- Զորեքշաբթի, 1 Յուլիս 2020-ին, Սուրիոյ խորհրդարանական ընտրութիւններու հայ համայնքի թեկնածու Ժիրայր Ռէիսեան այցելեց Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տեր Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանին՝ ստանալու սրբազան հօր օրհնութիւնը:

Առաջնորդ Սրբազան Զայրը օրհնութիւն տալով զօրակցութիւն յայտնեց թեկնածու Ժիրայր Ռէիսեանին եւ յաջողութիւն մաղթեց անոր յառաջիկայ աշխատանքներուն:

- Երկուշաբթի, 29 Յուլիս 2020-ին, Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան Ազգ. Առաջնորդարանի իր գրասենեակէն ներս ընդունեց ասորի ուղղափառ եկեղեցւոյ Պատրիարքական Փոխանորդ Առաջնորդ Պետրոս Զափս:

Զանդիպումին արժարձուեցան համայնքները յուզող գանազան հարցեր: Անոնք մտավախութիւն յայտնեցին տնտեսական ներկայ ծանր իրավիճակին եւ պակասեցան ժառանգութեան տարածման շուրջ:

Առաջնորդ Սրբազան Զայրն ու Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդը շեշտեցին գործակցութեան կարեւորութիւնը՝ միասնական ճիգերով յաղթահարելու բոլոր դժուարութիւնները:

- Երկուշաբթի, 29 Յուլիս 2020-ին Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդին հիւրընկալութեամբ Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս հայ երեք համայնքապետներ՝ Մասիս Եպիսկոպոս Զօպուեան, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Զայոց Առաջնորդ Արիի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան եւ Սուրիոյ Զայ Աւետարանական Զամայնքի Զամայնքապետ Վեր. Յարութիւն Սելիմեան հանդիպում մը ունեցան:

Մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին արժարձուեցան համայնքները յուզող գանազան հարցեր, ի մասնաւորի տնտեսական ներկայ ծանր իրավիճակը եւ պակասեցան ժառանգութեան նախագիծը կարեւորութիւնը:

Զամայնքապետները շնորհաւորեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետին Գահակալութեան 25-ամեակը, անոր մաղթելով քաջառողջութիւն եւ արեւշատ տարիներ:

Առաջնորդ Սրբազան Զայրը եւ Գերապայծառ Տերը շնորհաւորեցին Նաեւ Վերապատուելի Զամայնքապետը, «Աւետախօս» քարոզազիրի իրատարակութեան ուրախ առիթով:

- Շաբաթ, 27 Յուլիս 2020-ի առաւօտուն, Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան իր մասնակցութիւնը բերաւ Զալէպի քրիստոնէայ համայնքապետներու հերթական ժողովին, որ տեղի ունեցաւ հիւրընկալութեամբ՝ Յոյն Ուղղափառ Զամայնքի Առաջնորդական Տեղապահ Մար Մուսա ալ Խասի վարդապետին, Յոյն Ուղղափառ Զամայնքի Առաջնորդարանէն ներս: Առաջնորդ Սրբազան Զօր կ'ընկերակցէր Կրօնական ժողովի անդամ Արժ. Տ. Գառնիկ Զինյ. Չափանեան:

Զանդիպումի ընթացքին արժարձուեցան համայնքները մտահոգող գանազան հարցեր: Զամայնքապետները իրենց ուրախութիւնը յայտնեցին եկեղեցիներուն դռները ժողովուրդին առջեւ վերաբանալուն առիթով, շեշտելով նախագիծը կանոնները յարգելու անհրաժեշտութիւնը:

- Ուրբաթ, 26 Յուլիս 2020-ի առաւօտուն, Բերիոյ Զայոց Թեմի Առաջ-

նորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան Ազգ. Առաջնորդարանի իր գրասենեակէն ներս ընդունեց Զալէպի Լատին Զամայնքի Առաջնորդ Զայր Իպրահիմ ալ Սապալաղը: Զանդիպումին ներկայ գտնուեցան Կրօնական Ժողովի անդամներ Արժ. Տ. Յուսիկ Ա. Զինյ. Սեդրակեան եւ Արժ. Տ. Գառնիկ Զինյ. Չափանեան:

Զանդիպումին արժարձուեցան քրիստոնէական եկեղեցւոյ դիմաց ծանացած դժուարութիւններն ու մարտահրաւերները:

Զանդիպումը առիթ հանդիսացաւ անդրադառնալու եկեղեցիներու միջեւ գործակցութիւնը խորացնելու անհրաժեշտութեան:

Սրբազան հայրն ու հայր սուրբը հաստատեցին, որ եկեղեցին ծառայութեան ճամբով կը շարունակէ մնալ ժողովուրդի կողքին, բաժնետէլով անոր ցաւերն ու մտահոգութիւնները:

- Զինգշաբթի, 25 Յուլիս 2020-ին, կեսօրուան ժամը 1:00-ին, Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան ցաւակցական այցելութիւն տուաւ Զալէպի Մուֆթի դոկտ. Մահմուտ Աքքէմին, իր եղբոր մահուան տխուր առիթով, «Տար ալ Իֆթաա»էն ներս:

Առաջնորդ Սրբազան Զօր ընկերակցեցան Ազգ. Վարչութեան ատենապետ Յարութ Զիլիպեան եւ Կրօնական Ժողովի անդամ Արժ. Տ. Գառնիկ Զինյ. Չափանեան: Զանդիպումին ներկայ էին Սուրիոյ Զանրապետութեան Մուֆթիի Խորհրդական Պասէլ Զաւ Նասրալլա եւ Զալէպի Մուֆթիի Խորհրդական Երկրչ. Անաս ալ Շամի:

Առաջնորդ Սրբազան Զայրը Թեմի ժողովուրդին եւ ժողովականութեան անունով խորագրաց ցաւակցութիւն յայտնեց Զալէպի Մուֆթիին: Զանդիպումը առիթ հանդիսացաւ անդրադառնալու իսլամ-քրիստոնէայ խաղաղ գոյակցութեան կարեւորութեան: Սրբազան Զայրը շեշտեց, որ դարեր շարունակ հայերը եւ իսլամները եղբայրական յարաբերութիւն մշակած են, յատկապէս Սուրիական Զայրենիքէն ներս: Առաջնորդ Սրբազան Զայրը եւ Զալէպի Մուֆթիի կարեւորութեամբ մատնանշեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետին միջկրօնական բնագաւառէն ներս տարած հսկայ աշխատանքը: Այնուհետեւ, Սրբազան Զայրը ամփոփ կերպով անդրադարձաւ ծովափնեայ շրջան իր տուած հովուական այցելութեան եւ յառաջիկային Սուրիոյ այլ շրջաններ այցելելու իր ծրագիրին:

Զալէպի Մուֆթիին գնահատեց Առաջնորդ Սրբազան Զայրը՝ այս փուլին Թեմակալ Առաջնորդի ծանր պաշտօնը ստանձնելուն համար եւ վեր առաւ Սուրիական Զայրենիքին նկատմամբ հայութեան տածած սերը եւ հաւատարմութիւնը:

Մասիս Եպիսկոպոս հաստատեց, որ սուրիահայերը ուր ալ գտնուին, Սուրիոյ սահմաններէն ներս թէ դուրս, իրենց հաւատարմութեամբ եւ կեցուածքով նեցուկ եւ պաշտպան կը հանդիսանան Սուրիական ասպնջական Զայրենիքին ու անոր ամբողջականութեան եւ մասնակից կը դառնան վերաշինութեան աշխատանքներուն:

- Զինգշաբթի, 25 Յուլիս 2020-ի առաւօտուն, Զայ Ծերանոցի տնօրէն Աւօ Գաթրճեան այցելութիւն տուաւ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ.



Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանին, Ազգ. Առաջնորդարանէն ներս: Զանդիպումին սկիզբը ներկայ գտնուեցաւ Նաեւ Խնամակալութեան ատենապետ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պերթիզեան:

Զայ Ծերանոցի տնօրէնը Առաջնորդ Սրբազան Զօր զեկուցեց Զայ Ծերանոցիները եւ արտաքին յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ տարեցներու խնամքին հետ կապուած աշխատանքներու մասին:

Սրբազան Զայրը իր բարեմաղթութիւնները յայտնելով, Թեմին անունով զօրակցութիւն յայտնեց Զայ Ծերանոցին:

- Զինգշաբթի, 25 Յուլիս 2020-ի առաւօտուն, Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանին այցելեց Զայ Աւետարանական Զամայնքի Զամայնքային Գործադիր Մարմինը, Ազգ. Առաջնորդարանէն ներս:

Այցելուները, Սուրիոյ Զայ Աւետարանական Զամայնքի պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանին ողջոյնները փոխանցեցին Առաջնորդ Սրբազան Զօր եւ պաշտօնապէս իրաւիւրեցին Վերապատուելիին հեղինակած «Աւետախօս» քարոզազիրի շնորհանդէսին: Առաջնորդ Սրբազան Զայրը այս առիթով իր բարեմաղթութիւնները ուղղեց Գործադիր Մարմինի անդամներուն եւ յաջողութիւն մաղթեց շնորհանդէսը կազմակերպող մարմինին:

- Զորեքշաբթի, 24 Յուլիս 2020-ին, Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանին այցելեց Յոյն Կաթողիկէ Զամայնքի Առաջնորդ Եուհաննա Ճանպարթը, Ազգ. Առաջնորդարանէն ներս:

Յոյն Կաթողիկէ համայնքի Առաջնորդը իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդին եւ շնորհաւորեց զինք թեմակալութեան առաջին ամեակին առիթով:

ՌԱՓԱՅԷԼ
ՊԱՏԿԱՆԵԱՆ-190



Լալա Միսկարեան-Միսասեան

Անգամ մը եւս «Գանձասար»ի անխոնջ ու անսահանջ խմբագրուիին յաջողեցաւ գայթակղեցնել զիս, երբեմն դրաւ խումբ մը հայ գրողներու անուններ, որոնց յոբելենական տարին է 2020-ը: Անկարելի էր մերժել անոր առաջարկը, մանաւանդ որ յիշուած գրողներու մեծ մասը իր տաղանդով կրնար որեւէ ժողովուրդի գրականութիւնը զարդարել:

Այդ պահուն յիշեցի Աւետիս Ահարոնեանի «Ազատութեան ճանապարհին» գիրքի ծննդեան մասին հեղինակին վկայութիւնը. «Նա (Քրիստափոր Միքայելեանը- Լ. Մ.) ...խօսեց, համոզեց, հմայեց ինձ իր թաւ, ողբերգական ծայրնով եւ պարտադրեց փոքրիկ պատմութեան ծայրնով գրել *Դրօշակի համար*... Երկար մտածեցի... ճար չկար... անհնարին էր մերժել Քրիստափորին»:

Ո՛չ ես եւ ոչ ալ, վստահ եմ, «Գանձասար»ի խմբագրուիին յաւակնութիւն ունինք բաղդատուելու Քրիստափորին կամ Ահարոնեանին հետ, բայց մեր Չարմիկին եւս անհնարին է մերժել, ու ես յօժարեցայ (սիրով) գրել այդ գրողներու մասին:

Որմե՞ սկսիլ: Յարմար գտայ դիմել ամենատրամաբանական ձեւին՝ ընտրել ըստ իրենց ապրած ու ստեղծագործած ժամանակաշրջանին: Այդ իմաստով առաջինը Ռաֆայել Պատկանեանն է, յայտնի նաեւ որպէս Գամառ Զաթիպա:

Կրնայ հարց առաջանալ՝ ինչո՞ւ կ'անդրադառնանք 190 տարի առաջ ծնած գրողի մը: Հոս, իմ կարծիքով, կը ծագի ընդհանրապէս գրողի մը մեծութեան, կարեւորութեան հարցը: Համաշխարհային գրականութեան մէջ իրենց անփոխարինելի տեղը ունին հնագոյն ու հին դարերուն ապրած բազմաթիւ գրողներ, սկսեալ Յոմերոսէն, Շէքսպիրէն ու Սերվանտեսէն, եւ ոչ ոք միտքէն կ'անցընէ, թէ անոնք ժամանակավրէպ են ու «հինցած»: Այս հարցի մասին գրականագետներ հատորներ կը գրեն, իսկ մենք կը սահմանափակուինք ամենէն պարզ ու կարեւորութեամբ՝ մեծատաղանդ գրողները կը յաջողին կեանքի եւ մարդու մէջ տեսնել, բռնել յաւերժական մարդկայինը, մշտապէս այժմեականը եւ ներկայացնել բարձր արուեստով:

Արդ, Պատկանեան, թէեւ Յոմերոս կամ Շէքսպիր չէ, բայց իր գրականութեան շատ կողմերով տակաւին այժմեական է, ազգի կեանքի այլազան հարցերուն տուած իր բանաձեւերը այսօր ալ հարազատ են ու ճիշդ ուղի կը մատնակշեն:

Այս հարցին քիչ մը եւս կ'ուզեմ անդրադառնալ, թերեւս հայ գրողներու անկոչ փաստաբանի դերը ստանձնելով: Ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Սփիւռքի գրական շրջանակներու մէջ միշտ վերապահ, վեհերոտ կեցուածք կայ, երբ համեմատութիւն կը դրուի հայ եւ օտարորեւէ գրողի միջեւ: Բնական է, որ գրողները բաղդատելը նուրբ գործ է, եւ այդ մասին չէ խօսքս, այլ որ մենք միշտ հայ գրողը կը ստորադասենք (խօսքս բացառութիւններուն կամ սնապարծութեան մասին չէ): Այսպէս, մեկական օրինակ. Հայաստան ընդունուած էր Թումանեանը բաղդատել Պուշկինի հետ եւ, «բնականօրէն», գերադաս դիրքը ռուս բանաստեղծին էր... Այո՛, ան մեծութիւն է, բայց Թումանեան «անհաս գագայթն է մեր նոր քերթութեան» (Ե. Չարենց): Սփիւռքի մէջ ընդունուած է ֆրանսացի Մոփասանը նկատել «Նորավեպի Արքայ», իսկ Գր. Չօհրապը՝ «Նորավեպի Իշխան» եւ այլն: Արդեօք իրապէ՞ս երկրորդական տաղանդներ են հայ գրողները: Անտարակոյս, կան տկարներ, միջակներ, տաղանդաւորներ եւ առաւել շնորհուածներ: Բայց հազիւ թէ ամենքը, բաղդատած օտարներու, երկրորդական տաղանդներ են: Չմոռնանք, որ տաղանդի ծաղկումին, լիովին դրսեւորումին

համար շատ կարեւոր դեր ունին միջավայրը, տուեալ ազգի քաղաքական դիրքը, տնտեսական վիճակը, մշակութային մակարդակը, ի վերջոյ՝ տարածքը ու բնակչութեան թիւը: Որքան որ լայն, համաշխարհային կապերու եւ յարաբերութիւններու մէջ է երկիրը, այնքան աւելի լայն, ընդհանրական գաղափարներ կը ծնին ընկերութեան մէջ, եւ տաղանդաւոր արուեստագետներ գաղափարական ու արուեստի աւելի բարձր մակարդակներու կրնան հասնիլ: Արծիւը հաւնոցի սահման-



ներու մէջ արծիւ չի կրնար ըլլալ, անոր մեծ երկինք պէտք է: Տաղանդաւոր գրողը մեծ թռիչք կրնայ առնել, երբ համապատասխան միջավայր ու ուղիներ տակ լայն ցատկատախտակ ունի: Այսպէս, Հիւկոն համաշխարհային մեծութիւն է, որովհետեւ ունէր բարենպաստ քաղաքակրթական, մշակութային միջավայր, ու արուեստներու մայրաքաղաք Փարիզին մէջ անոր տաղանդը փայլեցաւ: Բաֆֆի մը, Թումանեան մը, Չօհրապ մը, Վարուժան մը, Սիամանթօ մը եւ դեռ ուրիշներ համաշխարհային նոյն հռչակը կրնային ունենալ, եթէ ըլլային... ըսենք՝ ֆրանսացի: Մեծ պետութիւնը իր տաղանդները թարգմանելու, ծանուցելու, ներկայացնելու այլազան կարելիութիւններ կու տայ: Նուազագոյնը՝ լեզուն. բաղդատենք ֆրանսերէն, անգլերէն, սպաներէն, ռուսերէն ընթերցողներուն բանակները ու հայերէն լեզունով ընթերցողներուն թիւը...:

Յիշենք Շահան Շահնուրի «Նահանջը Ամանց Երգի» վեպի հերոսին՝ Սուրենին խօսքը. «Մեր մէջ գետին չկայ, շարժում չկայ, գործունեութեան դաշտ չկայ... Յոյսերով կարելի չէ զիս օրորել, տեսայ ինձմէ առաջ եկող հայերը, որոնք այդ յոյսով ծերացան: Իմ արուեստս չ'ուզեր սպասել ոչ մէկ վաղորդայնի... Կ'ուզեմ խօսիլ, եւ բնական է, որ խօսքս ուղղեմ անոնց, որոնք լսելու ատեն ու փափաքը ունին: Հայր ոչ մէկը ունի, ոչ միւսը»:

Սուրենին բերնով նոյնինքն հեղինակը՝ Շահնուրն է որ կը խօսի: Փաստը՝ ան շրջան մը գրեց ֆրանսերէն, տպուեցաւ ու ֆրանսական գրական մրցանակներու արժանացաւ՝ Արմեն Լիւպեն անունով: Թէկուզ եւ չափազանցուած, բայց խօսքին մէջ կայ ճշմարտութիւն նաեւ մեր օրերուն համար: Իսկ ինչի՞ կ'արժանանային հայ գրողները՝ չքաւորութեան, նեղմիտ, նախանձ ու չարակամ մարդոց վայրահաշութեանց ու բանասարկութիւններուն:

Բաֆֆին բնաւ նուազ տաղանդ չէ, քան բարեկեցիկ ապրող բախտաւոր Հիւկօ մը, որ իր

հռչակէն հարբած՝ կ'առաջարկէր, ոչ աւելի, ոչ պակաս... Փարիզը իր անունով վերակոչել: Նոյն ատեն Բաֆֆի, Պարոնեան, Պատկանեան եւ ուրիշ շատեր ոչ միայն չէին գնահատուիր արժանւոյն, այլ ոչինչ մարդոց ծաղրի ու հալածանքի տակ կ'ըլլային յաճախ: Անոնք, արհամարհելով անձնական բարեկեցութիւն, պարտքերու տակ, կիսանօթի գոյութիւն կը քաջքշէին ու... կը շարունակէին ապերախտ ազգը լուսաւորելու համար տքնիլ տիւ ու գիշեր:

Առաւել՝ ազգային ճակատագրի ծանրագոյն բեռը շալկած հայ գրող յաճախ իր տաղանդը խեղդած է գուտ ազգային հարցերու սահմաններու մէջ: Այդ պայմաններուն տակ եկո՛ւր ու բարձրագոյն, փիլիսոփայական, տիեզերական հարցեր քննարկէ...

Անոնք ալ որ մեծ թռիչքներ ընել փորձեցին՝ աշխարհին ներկայացուելու համար անհրաժեշտ յենարանը չունեցան:

**Բանաստեղծը ծերացել է,
Թունդ մորիկը որ անցել է,
Հետք է թողել լայն ճակատին.
Եւ աչքերում աստուածային
Կայծը դարձեալ ցոլանում է,
Բայց նա, կարծես, սլանում է
Դեպի երկինք, կամքով որի
Իշաւ երկիր՝ ոգեւորի:**

Յ. Թումանեան

Գրողի մը ստեղծագործութիւնը լաւ հասկնալու համար աւելորդ չէ անոր ապրած ժամանակաշրջանի ազգային պատմութեան տեղեակ ըլլալը, իսկ հայ դասական գրողներու պարագային գրեթէ անհրաժեշտ է ճակատագրական 19-րդ դարու եւ 20-րդի առաջին կեսի հայոց պատմութեան իմացութիւնը: Այդ տրամաբանութեամբ շարժելով, այս յօդուածաշարին մէջ, պիտի չխուսափինք կարճ շեղումներէ կամ յաւելեալ անհրաժեշտ տեղեկութիւններէ:

Պատկանեան գրական ասպարեզ մտաւ 19-րդ դարու կեսերուն, երբ մեր հայրենիքի տարածքներուն կը տիրէին երկու կայսրութիւնները՝ Ռուսիա եւ Թուրքիա, հաւասարապէս նպատակ հետապնդելով հայութեան լիովին մոռացութեան տալ հայրենիք գաղափարն իսկ, մեկը՝ կարմիր, միւսը՝ ճերմակ ջարդերով: Սակայն մասնատուած, ցրուած հայութիւնը արդէն սկսած էր դանդաղօրէն արթննալ իր դարաւոր նիւթին: Հեռաւոր Հնդկաստանի գաղութներէ Մովսէս Բաղդամեանին ծայրը հասած էր, որ, առաջիններէն մին ըլլալով, զինեալ պայքարի կը կոչէր հայութիւնը եւ կ'ըսէր. «Պէտք է որ ազգին մէկ մասը միւսին համար իր գլուխը դնէր, քան թէ թոյլ տար որ ամբողջ ազգը ծառայ ու ստորուկ դառնար օտարին»(1772թ.):

Ի. Աբովեան իր «Վերք»ին մէջ ազգին կը յուշէր. **Խելքդ ժողովես, լինիս կտորիճ հայ, Ռուսաց հզօր, քաջ ձեռի տակին Փոքր դինջանաս ու քո աշխարքին Մուղայիթ կենաս, արիւնդ թափես, Զո ազգը պահես, քեզ անուն հանես:**

Երկու լուսաճառագ հոգեւորականներ՝ Հայր Ալիշան ու Հայոց Հայրիկը՝ Խրիմեան, գրիչը գէնք ըրած՝ ազատագրութեան շեփորը կը հնչեցնէին ու կը խանդավառէին արժանապատուութիւն ունեցող հայ երիտասարդները: Ֆիտայական շարժումին առաջին կայծերը կը բոցկլտային: Ու բնականօրէն, այդ կայծերը կրակի վերածել, տակաւին թմրած ու քնացած բազմութիւնները արթնցնել պէտք էր: Այդ սրբազան պարտականութիւնը՝ զինեալ պայքարով սեփական հայրենիքին տէրը դառնալ ու գաղափարը սերմանելու դերը կը ստանձնէին բանաստեղծները՝ երկրի երկու հատուածներուն մէջ ալ:

Հայոց ազգային Չարթօնքի մեծագոյն երախտաւորներէն մին ըլլալու կոչուած էր Պատկանեան, մեր ազգային ազատագրութեան պայքարի շեփորահարը եւ հնոցապալը:

(շար. 1)

Պատկածեւ ժահրը եւ Մեկը

ԱՌԱՍՊԵԼՆԵՐՈՒ ԾԱՄԲԱՆԵՐՈՎ-17



Յուշիկ Նազարեան

Մայր Բնութեան բարկութիւնը

Մայր բնութիւնը մեր բոլորին միտքերուն մէջ անչնչուած է բարութեան ու գուրգուրանքի հետ: Չէ՞ որ ան կը պարգեւէ մեզի իր բարիքները՝ միրգեր, հացահատիկ ու անասուններ, ջուր ու շնչելու մաքուր օդ... Բայց յաճախ կը մոռնանք յիշելու նաեւ անոր այլ երեսը՝ խորթ մայրը, սարսափելի վիուկը, որ կաթասային բովանդակութիւնը խառնելով կարծեք խառնակութեան ու շփոթի կը մատնէ ամբողջ մարդկութիւնը: Իր բարկութիւնը կ'արտայայտէ ջրհեղեղներով ու երաշտով, երկրաշարժով, հրաբուխով ու... համաճարակներով...

Փաստօրէն այս բոլորը նորութիւններ չեն: Աղէտներ եղած են ու կը շարունակեն ըլլալ, այնքան ատեն, որ կայ անոնցմէ վնաս կրող մարդկութիւն: Սակայն 21-րդ դարու մարդը ձեռքազատած էր առասպելաբանական միտքէն, իբրեւ թէ գիտութեան ու տրամաբանութեան մէջ գտնելով իր փրկութիւնը: Այսօր, պատկածեւ ժահրին պարտադրած կացութեան ընդառաջ, երբ գիտութիւնն ալ անճակած կը մնայ, ամէն ժամանակէ աւելի պէտք ունինք առասպելաբանական մտածողութեան, թէկուզ մասամբ մը վերագտնելու մեր հոգեկան հաւասարակշռութիւնը եւ գերծ մնալու ինքնամեկուսացման պարտադրած ճահճացումէն:

Եկե՛ք քայլ մը ետեւ երթանք եւ նայինք, թէ ի՞նչ կրնանք գտնել դիցաբանութեան էջերուն մէջ եւ ո՛ր կրնանք գտնել քիչ մը մխիթարանք, ահաւոր այս պայմաններուն տակ:

Առասպելաբանական միտքը կ'ընդունի, որ բնութեան մէջ ամէն բան երկրնային է: «Ամէն չարիքի մէջ բարիք կայ», կ'ըսէ հայկական ասացումը: Եւ կարելի է նաեւ նկատել հակառակը՝ կարծեցեալ բարիքներուն մէջ քողարկուած չարիք, որուն ներկայութեան կ'անդրադառնանք միայն այն ատեն, երբ շատ ուշ է արդէն: Բնութիւնը ինքնին գերծ չէ այս երկրութեան: Մայր Բնութիւնը, որ յաճախ կը ներկայացուի մայր աստուածութեամբ, առատութեան ու մայրութեան դիցուհիով, միշտ ունի իր հակապատկերը, երբեմն իր քոյրը կամ դուստրը, մահ ու սարսափ տարածող դիցուհին: Այս գաղափարին մարմնացումը կը գտնենք հինտուրանական դիցաբանութեան մէջ, ուր ստեղծագործ մայր դիցուհին՝ Շաքթին մարմնաւորումներէն մէկը կը կոչուի Զալի, որ ծայր աստիճան անխղճութեամբ ու բրտութեամբ կը պատժէ իր դէմ մեղանչողները: Մինչ Շաքթի կը պատկերուի իբր խաղաղութիւն շողացող, գեղադէմ երիտասարդ կին, Զալի կը ներկայանայ սարսափազդու պատկերով մը: Անոր մարմինը

յաճախ սեւ կամ մուգ կապոյտ է, դուրս ցցուած երկար լեզուն կարմիր է, ներկուած իր թշնամիներուն արիւնով, չորս ձեռքեր ունի, որոնցմէ մէկը սուր կամ մանգաղ բռնած է, միւսը՝ կտրուած գլուխ մը, երրորդը արիւնաթաթախ պարզուած ձեռք մըն է, իսկ չորրորդով բռնած է աման մը, որուն մէջ կը կաթի կըտրուած գլխուն արիւնը: Դիցուհին վիզը գարդարուած է թշնամիներուն



կմախքներով եւ ան դիակի մը վրայ կանգնած, խելայել նայուածքներով կը պարէ մահուան պարը: Մայր Բնութեան այնքան ալ գեղեցիկ պատկերացում չի թուիր ըլլալ:

Շումերական դիցաբանութեան մէջ կը հանդիպինք մայր դիցուհիի՝ Ինանայի քոյր Արեշքեմալին, որ մեռելներու աշխարհի դիցուհին էր: Շումերական սալիկները որքան հարագատ կերպով կը ներկայացնեն անոնց տարբերութիւնները: Ինանա, կեանք տուող մայր դիցուհին ունի կակուղ կուրծքեր, որոնցմէ յաւերժաբար կը հոսի սնուցող կաթ, մինչ Արեշքեմալի կուրծքերը քարի կտորներ են: Ան անկարող է կեանք պարգեւելու եւ այդ կեանքը սնուցանելու: Ան կը տիրէ մեռելներու աշխարհին վրայ, իր ամուսինին, համաճարակներու աստուած Ներճալի ընկերակցութեամբ եւ իր մէկ նայուածքով կը քարացնէ ու մահուան կը դատապարտէ որեւէ շնչող եակ:

Դժբախտաբար մեր հայկական դիցաբանութեան մէջ չէ հասած Անահիտին ժխտական մարմնացումը, սակայն ժողովրդական հեքիաթներուն մէջ յիշուած չար պառաւները, դաժան խորթ ու հարագատ մայրերը խորհրդաւոր այդ անձնաւորութեան վերապրուկներն են:

Այսօր, բոլոր ժամանակներէն աւելի ակնատես կ'ըլլանք Մայր Բնութեան դաժան բարկութեան: Կարծեք այլեւս անոր շփացած գաւակները չենք: Ան սկսած է նախապատուութիւնը տալ իր գաւակներէն ամէնէն փոքրին, բշիշէն ալ աւելի

փոքր ժահրին, որպէսզի սանձէ մարդ արարածին ազատ ընթացքը: Կարծեք Մայր Բնութիւնը դիտարդեալ ձեւով մարդկութիւնը կը հարուածէ անոր ամէնէն խոցելի տեղէն՝ շնչառութեան:

Մարդ արարածին համար շնչառութիւնը կեանքի հոմանիշն է: Երբ մօր արգանդէն դուրս կու գանք դէպի աշխարհ, առաջին անգամ ըլլալով մեր շնչառական գործարանները կ'աշխատին, խորունկ շունչ կ'առնենք եւ կ'արձակենք կեանքի առաջին ճիչը, յայտարարելու համար մեր գալուստը: Այդ պահէն մինչեւ մահ, միակ բանը որ մեր հետ կայուն կը մնայ, կը փաստէ, որ տակաւին կ'ապրինք, մեր շնչառութիւնն է: Ինչպէս հայերէնի, այնպէս ալ բազմաթիւ լեզուներու մէջ, «շունչ» բառը կը գործածուի որպէս «կեանք» բառի հոմանիշ: «Շնչաւոր եակ» կ'ըսենք հայերէնով, նկատի ունենալով բոլոր ապրող էակները, իսկ երբ մէկուն մահուան կ'ակնարկենք, կ'ըսենք՝ «Վերջին շունչը փչեց»:

Պատկածեւ ժահրը եկաւ մարդկութեան շնչառական գործարանները հարուածելու, մարդկութիւնը շնչառութիւնը ընելու: Ահա թէ ինչո՞ւ այլ համաճարակներէ աւելի սարսափելի կը թուի ան մեզի: Կարծեք ան Մայր Բնութեան, Զալիին դաժան ձեռքն է՝ բռնած մարդկութեան կուրծքը, Արեշքեմալին մահացու նայուածքը որ քիչ-քիչ մեր շունչը կը սպառէ:

Եւ ճակատագրի ի՞նչ հեգնանք, երբ մարդ արարածը անտեսանելի

ժահրով շնչառութիւնը կ'ըլլայ, բնութիւնը լիաթոք շունչ կը քաշէ: Մարդկութեան պատճառած ապականութեան հետքերը սկսած են չքանալ: Օդը սկսած է մաքրուիլ, օդոսփերտը կարկտուած է եւ ովկիանները, ծովերն ու գետերը հարիւրաւոր տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով անգամ մը եւս կը ցուցադրեն իրենց մաքրամաքուր ընդդէմը:

Բայց ա՞յս է մեր գոյութեան պայմանը՝ ապրիլ մեռցնելով, այլապէս՝ ապրեցնել մեռնելով: Արդեօք չէ՞նք կրնար բնութեան հետ համահունչ գոյատեւել այս մոլորակին վրայ, առանց բարկացնելու Մայր Բնութիւնը: Յատկապէս վերջին երկու դարերուն, մարդկային ազատութիւնն ու յաւակնտութիւնը մեր մոլորակը խրեցին ապականութեան տիղմին մէջ: Պատկածեւ ժահրը իր հետ բերաւ մեզի բազմաթիւ դասեր, ան Մայր Բնութեան առաջին ազդարարութիւնն է ազատ մարդուն, դեղին քարտը, ինչպէս պիտի անուանէին Ֆուբայուի սիրահարները: Արդարօրէն կը փափաքինք, որ պատկածեւ ժահրի գոհեղուն կեանքը իզուր գացած չըլլայ, հետեւաբար, պարտինք արժեքաւոր դասեր քաղել պատահածէն, պարտինք հետեւիլ անոնց, չվերադառնալ մեր հին սպառնիչ կեանքին: Միտումի մշակութիւնը հեռանալով վերագտնենք մեր երբեմնի հոգեւոր արժեքները, վերադառնանք բնութեան ու անոր Արարիչին գիրկը, այլապէս ամբողջ մարդկութիւնը պիտի ըլլայ այն դիակը, որուն վրայ Զալի կը պարէ մահուան իր պարը:

ԹՄՓ ՏՄԼ...

Սկիզբ՝ էջ 1

Նին պաշտօնական բացումը պիտի կատարուի եւ կեդրոնը պիտի վերսկսի ծառայութիւն մատուցել շրջանի բնակչութեան: Սուրիոյ Նախագահը այս կեդրոնի վերակառուցման եւ սատար կանգնեցաւ, այս անգամ առողջապահական եւ ընկերային ծառայութիւնը քաջալերելով:

Ծանօթանալէ ետք շէնքի վերակառուցման աշխատանքին, տիար Զելլէս հանդիպում ունեցաւ փոքր ձեռնարկութիւններու յանձնարարութիւնները:

Զելլէս Նախքան Ազգ. Պատասպանողորդը այցելեց այս ծրագիրէն օգտուած կարգ մը արհեստաւորներուն խառնութեանը, ծանօթացաւ անոնց աշխատանքին եւ գոհունակութեամբ գնահատեց աշխատող տարրը:

Նոր Գիւղի մէջ տակաւ առ տակաւ վերսկսած են երեւիլ աշխատանքէն կոպտացած արհեստաւորներու ձեռքեր, լսուիլ յաճախորդներ իրաւիւրող վաճառորդներու ձայները...

Ազգ. Պատասպաններն ենք, տիար Զելլէսը դիմաւորեց Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տեր

Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանը, ներկայութեամբ ՍՕԽ-ի Շրջ. Վարչութեան եւ Ազգ. Պատասպանի պատասխանատու կազմին: Ապա Պատասպանի սաները հաւաքուեցան անոր շուրջ եւ բարի գալուստի խօսքերով շնորհակալութիւն յայտնեցին այս ջերմ ու սիրալիր հանդիպումին համար:

Ընտանեկան ջերմ մթնոլորտի մէջ անոնք գրուցեցին հիւրին հետ ու իրենց առօրեային մասին պատմեցին:

Այնուհետեւ սրբազան հայրը տիար Ֆարես Զելլէսը ծանօթացուց Զալէպի մէջ համայնքին տարած բարեփրական շարք մը աշխատանքներուն, ներկայ դժուարութիւնները դիմագրաւելու ճիգերուն եւ շնորհակալութիւն յայտնեց Սուրիոյ վստմաշրջնախագահին մշտական հետաքրքրութեան եւ գործնական լուծումներու առաջնորդող գորակցութեան համար, հաստատելով որ հայ համայնքը ամէն ջանք ի գործ կը դնէ մասնակցելու վերականգնումի աշխատանքներուն:

Իր կարգին, տիար Զելլէս հաստատեց, որ ժողովուրդը գործի մղելու տարբեր ծրագիրներ պիտի մշակուին, որպէսզի ձեռք-ձեռքի, սեփական աշխատանքին վստահելով յաղթահարենք պատերազմի, համաճարակի եւ տնտեսական պաշարման ժամանակաւոր դժուարութիւնները:

Կրօնաբարոյական

ԴՐՁՄԸ

Յոզ. Տ. Լեւոն Արդ. Եղիայեան

«Ձեր հարստութիւնը ո՛ր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր հոգին» (Մտ 6.21) հիմնուած

Հինէն ի վեր դարձած է պատճառ մտքի: Կ'առաջնորդէ մեզ գողութեան, նմանասպանութեան, անձնասպանութեան, ատելութեան եւ պէս-պէս մոլութեանց գործառնութեան: Սկիզբէն մինչեւ այսօր մարդոց բացարձակ մտահոգութեան պատճառը եղած է: Բայց հակառակ այս բոլորին ունի իր դրական ներդրումը մեր կեանքէն ներս, եւ առանց անոր ոչ մէկ նիւթական փոփոխութիւն կը կատարուի: Դարձած է ստեղծիչ նիւթական աշխարհին, իսկ քանիչ՝ հոգեկանին: Վստահաբար այս կարճ ներածականէն ետք յստակ եղաւ, որ մեր նիւթը դրամն է:

Ի գուր տեղ չէ որ Զրիստոս իր առաքելութեան ընթացքին յայտարարեց. «Ձեր հարստութիւնը ո՛ր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր հոգին» (Մտ 6.21): Դրամը ներկայիս դարձած է տերն ու տիրականը այս աշխարհին, մարդուն կողմէ ստեղծուած, բայց մարդուն վրայ իշխող այս փունձ, կլոր մետաղը, աշխարհը մեզ մով միասին կը կառավարէ: Առինքնող տեսքով եւ ոսկեայ փայլքով ունայն կլորը մեզ կը կլորցնէ եւ մեր միտքը Աստուածային կածանէն կը հեռացնէ՝ այսինքն ուղիղ ուղիէն կը տակնի մեզ դէպի դարձարձիկ ուղի:



Ոչինչ կրնանք գործել այս աշխարհին մէջ առանց դրամի, բայց այդ չէ հարցը: Ինչպէ՞ս գործածել մեր ունեցած դրամը. Այս է հիմնական հարցը: Աշխատիլ, դրամ դիպել եւ ապա անիմաստ ժամանակաւոր հաճոյքներուն համար ծախսել՝ զայն, թե՛ աշխատիլ եւ դիպուած դրամով մարդկային ընկերութեան եւ հոգեկան աճումի համար օգտագործել զայն: Հրեաները մինչեւ այսօր իրենց եկամուտներուն տասանորդը կը պահեն տաճարին եւ մաս մըն ալ՝ ողորմութիւն ընելու: Հարուստ ըլլալը դիւրին է: Հարուստ ըլլալու կերպերը շատ են, բայց այդ չէ հարցը, ի՞նչ կ'արժէ աշխարհի մէջ հարուստ ըլլալ, բայց ունենալ ամենաստորին նկարագիրն ու մարդկային վսեմ արժանիքները դատարկ ապրիլ: Ի՞նչ կ'արժէ հարուստ ըլլալ, երբ մենք ունինք հոգիի կորուստ ու յաւիտենական տանջանք: Ի՞նչ կ'արժէ հարուստ ըլլալ, երբ դժուար պիտի ըլլայ մեզի արքայութիւն մուտքը: Ոչինչ կ'արժէ եւ ունեցած դրամովս Աստուծոյ շնորհքին, օրէնքներուն ու բարոյական արժեքներուն դիմաց, Զրիստոս իսկ սըղոսցաւ կերպով կը յայտնէ թէ. «... Շատ դժուար է հարուստին արքայութիւն մտնելը, քան պարանիսն՝ ասեղին ծայրը»: Բայց պետք չէ մոռնանք այն հարուստները, որոնք մշտական կերպով կ'աղօթեն Աստուծոյ առանց կեղծաւորութեան, ողորմութիւն կը գործեն, բարերարութիւն կ'ընեն ամէն տեղ:

Դրամը դրական իմաստով կարելի է օգտագործել երկրի շինութեան, բարգաւաճութեան համար, ի մասնաւորի ողորմութեան համար: Ողորմութիւնը կը հանդիսանայ հարուստներուն փրկութիւնը: Ողորմութեամբ անոնք կ'օգնեն աղքատ խաւին եւ անոնց կը մատակարարեն ապրուստի հանգիստ եւ առողջ պայմաններ: Հիմնական բոլոր կրօնքներուն բարոյական եւ մարդկային արժեքներուն մաս կազմած է ողորմութիւնը: Անոնց համաձայն փրկութեան արժանանալու համար անհրաժեշտ է ողորմութիւն գործելը: Դրամը պետք է գործածուի մարդկային բարոյական արժեքներու վրայ հիմնուելով: Դրամը երբ օգտագործուի համար ստեղծուեցաւ, ստեղծողին նպատակն էր օգտագործել զայն մարդկային պետքերու ապահովման համար, ոչ թէ՛ գռեհիկ գործերու:

Նոր Կտակարանին մէջ կը կարդանք. «Յոգի է Աստուած, եւ անոր երկրպագուները պետք է հոգիով եւ ճշմարտութեամբ զայն պաշտեն...» (Յհ 4.24), բայց ներկայիս մեր աստուածը դրամը դարձած է եւ անոր կ'երկրպագենք ոչ միայն մեր մարմինով ու մտքով, այլեւ հոգիով, կու տանք մեր կեանքն իսկ, անոր համար կը գոհենք մեր նմանները, եղբայրներն ու քոյրերը եւ նոյնիսկ մեր գաւակները: Յոգի Աստուածը մոռնալով կը պաշտենք դրամ աստուածը՝ անոր հոգիով ու մարմնով երկրպագութիւն ընելով:

Անշուշտ պետք չէ մոռնանք մեր հաւատացեալ եղբայրները, որոնք իրապէս Սուրբ Երրորդութեան հաւատալով կառչած են եկեղեցւոյ օրէնքներուն, կառչած են Աստուծոյ խօսքին եւ կ'երկրպագեն Յոգի Աստուածը, հոգով անոր օրհներգելով եւ փառաբանելով Անոր Սուրբ Անունը:

Ուստի դրամը օգտագործելու մասին մտածելով ջանանք մեր սխալները սրբագրել եւ ձերբազատելով դրամապաշտութենէն դառնանք Աստուածապաշտ հաւատացեալներ, որոնք միջոցաւ մարդիկ ապաշխարութեան պիտի առաջնորդուին Աստուծոյ եւ Սուրբ Երրորդութեան փառք տալու համար:

ՀԱՅ ԱՄԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Սուրբոյ Հայ Աւետարանական Համայնքի Պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանի, Շաբաթ, 4 Յուլիս 2020-ին Բեթէլ եկեղեցւոյ շրջափակէն ներս տեղի ունեցաւ Հայ Աւետ. Բեթէլ Երկրորդական վարժարանի մանկապարտեզի եւ 6-րդ կարգի շրջանաւարտ հունձքերուն հանդէսը: Ներկայ էին Հայ Աւետարանական եկեղեցիներու մարմիններ, Սուրբոյ Հայ Աւետարանական Համայնքի Կրթական Խոր-

կազմին շնորհակալական խօսքեր արտասանեցին՝ իրենց ակխոնջ աշխատանքին համար:

Այնուհետեւ պատահաբար վրայ ցուցադրուած պատկերներուն ցուցադրութեամբ ներկայացուեցաւ մանկապարտեզի եւ 6-րդ կարգի՝ 2019-2020 ուսումնական տարեշրջանի գործունեութիւնը:

Յաջորդաբար խօսք առին վարժարանիս մանկապարտեզ պանուհին՝ Անի Կարծիկեան-Հարպոյեանն ու տնօրէնուհին՝ Արուսեակ Տեր Ար-



հուրդի ներկայացուցիչներ, տնօրէնութիւն, ուսուցչական կազմ, ծնողներ եւ հիւրեր:

Ամավերջի հանդէսները աշակերտներուն համար պատեհ առիթն են

թինեան-Հալլաճեանը:

Այնուհետեւ համայնքապետ վերապատուելի Յարութիւն Սելիմեանի ձեռամբ տեղի ունեցաւ վկայականաց բաշխումը, որմէ ետք վե-



արտացոլելու երախտագիտութիւնը իրենց համար ամէն ջանք ի գործ դնող ծնողներուն, տնօրէնութեան եւ ուսուցիչներուն:

6-րդ կարգի աշակերտները իրենց բացման խօսքին մէջ վեր առին հայ ժողովուրդի կենսասիրութիւնը, որուն հիմքն է ազգային արժեքներով հարուստ մեր կեանքը:

Հանդէսի տնօրէնութեան աշակերտները ասմունքներով եւ Ս. Գրային հատուածներով լուսարձակի տակ առին հայ ժողովուրդի գոյութեան կարեւոր կռուանները՝ գիրը, լեզուն, մշակոյթը եւ կրօնքը:

Դարերու ընթացքին մեր մշակոյթին օտար մշակոյթներուն հետ փոխկապակցութիւնը, ինչպէս նաեւ անոր նորոգուող դիմագիծը արաբերէնով, անգլերէնով եւ ֆրանսերէնով արտասանուած խօսքերուն ընդմէջէն ներկայացուեցան:

Ապա աշակերտները արաբական, հայկական եւ օտար պարերով խանդավառ մթնոլորտ ստեղծեցին:

Ընթացաւարտ աշակերտները իրենց դասընկերներուն անունով համայնքապետ վերապատուելիին, տնօրէնութեան եւ ուսուցչական

րապատուելին շնորհաւորական իր խօսքով հանդէս եկաւ ու ըսաւ.

«Փառք Ամենակալին, մենք կրցանք համախմբուիլ ու կազմակերպել նման հանդէս մը հակառակ տիրող պայմաններուն: Աստուած ամենակարող է եւ ամէն բան գորացնող է, նոյնիսկ մարդ արարածին ու աշխարհին ընթացքը խանգարող կացութիւններու մէջ: Հետեւաբար մեր յոյսը պիտի չդնենք անցողակի երեւոյթներու կամ խոստումներու վրայ, այլ՝ յաւիտենական Աստուծոյ վրայ»: Վերապատուելին դիտել տուաւ, որ պսակածեւ ժահրէն նախագգուշական քայլերուն ընդառաջ դպրոցները փակ յայտարարուեցան, սակայն Հայ Աւետարանական Բեթէլ Երկրորդական Վարժարանը առցանց ուսուցումով Սուրբոյ մակարակով ուսումնական տարեշրջանը իր լրումին հասցուց:

Աւարտին, ան շնորհաւորեց ծնողները, բարձր գնահատեց ուսուցչական կազմին եւ տնօրէնութեան աշխատանքը՝ մաղթելով բարեբեր եւ բեղուն գործունեութեամբ յազեցած օրեր:

Լուսին Ապաճեան-Չիլաբօշեան



ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ



Շաբաթը լաւ կ'ընթանայ: Առաջին մէկ երկու օրը հաւանաբար լարուած պահեր ունենայ: Փորձեցէք կշանակութիւն չտալ թիրիմացութիւններուն, պարզապէս իրականութիւնները պարզեցէք:

ՏՈՒԼ



Մի՛ ներքաշուիք վեճերու մէջ: Վեճերը տհաճ հետեւանքներ կրնան ունենալ: Պահպանեցէք ձեր արդիւնաւետ յարաբերութիւնները:

ԵՐԿՈՒՐԵԱԿ



Դուք դիրաւ լեզու կը գտնէք մարդոց հետ: Չէ բացառուած, որ լոյնիսկ ձեր նախկին մրցակիցները դաշնակիցներ կրնան դառնալ:

ԽԵՅՁԵՏԻՆ



Շաբաթը յարմար է նոր աշխատանքի ձեռնարկելու համար: Անգործութենէն ձեր տրամադրութիւնը կրնայ խանգարուիլ եւ բացասական տրամադրութիւններ յառաջանալ:

ԱՌԻՇ



Բարենպաստ շաբաթ է նոր յարաբերութիւններ մշակելու համար: Ուրախ տրամադրութեամբ կ'անցընէք հանդիպումները, անկաշկանդ մթնոլորտի մէջ: Մարդիկ հետաքրքրուած են ձեր գաղափարներով:

ԿՈՅՍ



Շաբաթը անհանգիստ, բայց բաւական բարենպաստ կ'անցնի: Ձեզի կարելիութիւն կ'ընձեռուի նոր պաշտօն ստանձնելու:

ԿԵԻՈՔ



Միայն երեք խուսափելու համար լուրջ մօտեցում ցուցաբերեցէք ծագած հարցերուն եւ շուտափոյթ լուծումներ որոնեցէք:

ԿԱՐԻՃ



Ակնկալելի են անսպասելի դրամական ձեռքբերումներ: Անոնք համեստ կ'ըլլան, բայց կրնան դրական շխատանքի ուղղել ձեզ:

ԱՂԵՂՆԱՌՐ



Չեն բացառուիր ճամբորդութիւնները: Որոշ աղեղնաւորներ կը ճամբորդեն այնպիսի վայրեր, որոնց մասին շատ հետաքրքրական բաներ լսած էին նախապէս:

ԱՅՏԵՂՋԻՐ



Որպէսզի յաջողութեան հասնիք, ձեզի անհրաժեշտ են օգնականներ ու դաշնակիցներ: Որոնցէք աշխատունակ եւ վկայեալ գործակիցներ:

ՋՐՅՈՍ



Ընտանեկան հարցերը ուշադրութիւն կը պահանջեն: Ձեր աշխատանքներուն պատճառով անտարբերութեամբ մի՛ վարուիք ձեր ընտանիքի անդամներուն հետ:

ՋՈՒԿ



Ձեր առողջութեան հոգ տարէք: Մի՛ յետաձգէք բժիշկին այցելութիւնը, այլապէս ձեր առողջական հարցերը պիտի բարդանան:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՐԻՔԵՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՁԵՒՈՎ ՕԳՏՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Իւրաքանչիւր տարիք ունի իր առաւելութիւնները եւ մեզմէ կախեալ է, թէ որքա՞ն կրնանք օգտուիլ այդ առաւելութիւններէն: Կեանքը կարճ է: 20 տարեկանին մեզի կը թուի, թէ մեր դիմաց անսահմանափակ ժամանակ կայ, սակայն ժամանակը արագ կ'անցնի, յանկարծ մենք մեզ կը գըտնենք հասուն տարիքի եւ երբեմնի պարզ ու քնական համարուող բաները կ'ըլլան դժուար եւ ան-



հասանելի: Դեռեւաբար, նախընտրելի է որ որոշ բաներ չյետաձգենք եւ իրականացնենք քանի դեռ առիթը ունինք: Դեռեւեցէ՛ք հետեւեալ խրատներուն, քանի դեռ ուշ չէ:

1- Մտածեցէ՛ք դուք ձեր մասին

Ոչ ոք ձեր մասին պիտի մտածէ եթէ դուք չընէք այդ մէկը: Երիտասարդութիւնը լաւագոյն առիթն է իրականացնելու ձեր իղձերն ու փափաքները: Դեռագային կրնաք ունենալ այնքան շատ պարտաւորութիւններ ու հրատապ խնդիրներ, որ դուք ձեր փափաքներուն մասին չմտածէք:

2- Վայելեցէ՛ք պարզ բաները

Յաճախ քալեցէ՛ք, կարդացէ՛ք արժեքաւոր գիրքեր, գործ ընթացելու առիթ պիտի չունենաք ապագային, գրուեցէ՛ք ձեր ընկերներուն հետ եւ գնահատեցէք այն պահերը, որոնք ներկայիս ձեզի սովորական կը թուին, իսկ յետոյ պիտի վերածուին անհասանելի շքեղութիւններու:

3- Մասնակցեցէ՛ք արշաւներու եւ ճամբորդեցէ՛ք

Շատեր կը ցանկան ճամբորդել, այլեւայլ վայրեր տեսնել, սակայն այդ մէկը կը յետաձգեն ապագային, ենթադրելով թէ պայմանները աւելի նպաստաւոր կրնան ըլլալ: Սակայն անոնք կը մոռնան, որ ապագային պիտի ունենան ընտանիք եւ պիտի դրուին նիւթական աւելի մեծ պարտաւորութիւններու դիմաց: Դիմա՞ ձեր լաւագոյն առիթն է: Գործը թէկուզ պարզ պիտի չընդհանրուի, մասնակցեցէք արշաւներու, հետախուզեցէք ձեր քնակած քաղաքը:

4- Դասկցէ՛ք թէ ինչպիսի՞ անձ մըն էք

Իւրաքանչիւր մարդ իւրայատուկ է եւ ունի իր գօրաւոր ու տկար կողմերը: Որքան շուտ ճանչնաք ձեզ անոնք, այնքան աւելի դիրքի կ'ընթանաք ձեր կեանքը: Դաւարտացեք ձեր ինքնութեամբ եւ գայն անվարան ցոյց տուէք աշխարհին:

5- Սովորութիւն ըրէք կեդրոնաւալ ներկայիս վրայ

Այս կեանքի ամենակարեւոր հմտութիւններն մէկն է, որ պիտի օգնէ ձեզի վայելելու կեանքը: Մենք չենք կրնար փոխել անցեալը ոչ ալ մեր ջուրեմամբ մեր վերահսկողութեան տակ առնել ապագան, հետեւաբար պարտիք կեդրոնաւալ միայն այն բաներուն վրայ, որոնք ձեզի հասանելի են, հոս եւ այժմ:

6- Դադրեցուցէ՛ք մարդոց կարծիքին ամեն գնով անսալը

Ուրիշներու կարծիքին նկատմամբ չափազանց զգայուն վերաբերմունքը երիտասարդութեան սովորութիւններէն է: Ժամանակի ընթացքին պիտի սորվիք ձերբազատիլ այդ սովորութենէն, բայց որքան շուտ գործացնէք ձեր դիմադրողականութիւնը, այնքան լաւ:

7- Եղէ՛ք դրական անձնաւորութիւն

Երիտասարդները կեանքի հանդէպ դրական աշխարհայեաց կ'ունենան, բայց յաճախ հետագային կը փոխուին: Փորձեցէ՛ք պահպանել ձեր դրական մօտեցումը: Ձեր յաջողութիւնը կախեալ է կեանքի հանդէպ ձեր մօտեցումէն եւ որքան դրական ըլլաք, այնք արագ կրնաք հասնիլ յաջողութեան:

8- Ձերբազատեցէ՛ք բացասական յարաբերութիւններէն

Երիտասարդութեան ընթացքին մարդոց հետ յարաբերութիւնները դիրաւ կը մշակենք եւ լոյնքան ալ դիրութեամբ կը խզենք այդ յարաբերութիւնները: Դեռեւաբար, նախընտրելի է որ ձեր շրջապատէն հեռացնէք այն անձերը, որոնք ձեր վրայ ճնշող, ջղայնացնող եւ ընդհանրապէս բացասական ազդեցութիւն ունին:

9- Սորվեցէ՛ք օտար լեզու

Այլ լեզու սորվիլը այլ աշխարհի յայտնաբերելու համագօր է: Այս հմտութիւնը կրնայ ապագային ընդլայնել ձեր հնարաւորութիւնները եւ նոյնիսկ՝ փոխել ձեր կեանքը: Մի՛ հետա-



ձգէք, որքան մեծնաք այնքան դժուար կ'ըլլայ նոր գիտելիքներ սորվիլը:

10- Ձանացէ՛ք նոր փորձառութիւններ ձեռք ձգել

Երիտասարդ տարիքը նոր փորձառութիւններ ձեռք ձգելու լաւագոյն ժամանակաշրջանն է: Այն ինչ որ այս տարիքին սովորական կը թուի, աւել մեծ տարիքի կրնայ խենթութիւն նկատուիլ:

11- Մշակեցէ՛ք լաւ սովորութիւններ

Երիտասարդութեան շրջանին ձեռքբերուած սովորութիւնները մեծ դերակատարութիւն ունին կեանքի ընթացքին: Դասուն տարիքին աւելի դժուար է ձերբազատիլ վատ սովորութիւններէն կամ մշակել նոր սովորութիւններ:

12- Գտէ՛ք ձեր կոչումը

Որքան շուտ մտածէք կեանքի ձեր կոչումին մասին, այնքան աւելի յաջող եւ երջանիկ ընթացք կրնայ ունենալ ձեր կեանքը: Յաճախ դժբախտ մարդիկ անոնք են, որոնք կորսնցուցած են կամ ընդհանրապէս չեն գտած իրենց կեանքին իմաստը:

Երիտասարդ տարիքը լաւագոյն շրջանն է իրականացնելու դրական փոփոխութիւններ ձեր կեանքին մէջ: Մի՛ վատնէք ժամանակը: Ձեր կեանքը ուղղակիօրէն կախեալ է այս ժամանակաշրջանին ձեր ձեռքբերումներէն:

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

Լուրեր Սուրիոյ Մարզական Կեանքին

- Սուրիոյ Ողիմպիական Հաւաքականի խաղացող Ապտ ուլ Ռահման Պարաքաթ, 2 տարուան պայմանագիրով միացաւ իրաքի Թալապա խումբին:

- Սուրիոյ ֆուտբոլի 35-րդ փուլի մրցումներուն, Հալեպի Իթթիհատը հերթական 4-րդ շաբաթը ըլլալով ձախողեցաւ յաղթական դիրքով աւարտելու մրցումը եւ դարձեալ 1-1 հաւասարութեամբ աւարտեց Զարամէի դէմ կատարած մրցումը: Հանդիպումի 65-րդ վայրկեանին, Անաս Պուրան նշանակեց Իթթիհատի կողմ, իսկ մրցակիցին կողմէն նշանակուեցաւ 93-րդ վայրկեանին: Հրթրին խումբի Մարտիկ Մարտիկեանի ընկերները յաջողեցան 1-0 արդիւնքով պարտութեան մատնել աղիսակին առաջին դիրքը գրաւող Թըրքիը եւ աւելի մօտեցաւ առաջնութեան դիրքին: Իսկ Ուսապէն 2-1 արդիւնքով



յաղթեց Սահելին: Նոյն արդիւնքով Ֆըթուէն յաղթեց Նաուահիրին, իսկ Շըրթան ճեգիրեին: Ճեյ ընդդէմ Թալիայի եւ Ուահտէ Ընդդէմ ճապլէի մրցումները վերջ գտան 1-1 հաւասարութեամբ:

- Թշրին խումբի մարզիչ Մահեր Պահիի Հրթրինէն պարտուելէ ետք ներկայացուց իր հրաժարականը: Լաթաքիոյ ակումբի վարչակազմը, մերժելով մարզիչին փափաքը, զօրակցութիւն յայտնեց անոր եւ խնդրեց իրմէ մնալ խումբին հետ մինչեւ տարեշրջանի աւարտը:

- Սուրիոյ Մարզական Գերագոյն Կոմիտէի նախագահ Ֆիրաս Մուալլա յայտարարեց, որ գործակցաբար Սուրիոյ Տեղեկատուութեան Նախարարութեան հետ 1-1-2021-էն սկսեալ բացուած պիտի յայտարարուի Սուրիոյ մարզական պատկերասփիւռի կայանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Մեսի Պահանջուած Է Սիթիին

Զաթալոնիական ակումբի արժանիքի խաղացող Լիոնէլ Մեսի ստացաւ Նոր խումբի մը միանալու առաջարկ մը: Ըստ Fox Sport-ին, Մեսիի ծառայութիւններով հետաքրքրուած է Մանչեսթըր Սիթին:

Վերջերս Մեսի արտայայտուած էր, որ կ'ուզէ իր մարզական կեանքը շարունակել այլ ակումբի մը հետ, որովհետեւ ան գոհ չէ կազմին ընթացքէն: Ան մերժեց Պարսելոնայի ղեկավարներուն չորս տարիով, մինչեւ 2025, իր պայմանագրութիւնը երկարաձգելու առաջարկը: Մեսի սպանական խումբին հետ մասնակցած է 724 մրցումի եւ նշանակած է 630 կոլ:



Պայերն Միւնխէն Տիրացաւ Գերմանիոյ Բաժակին

Երկիրին ախոյեանութիւնը ձեռք ձգելէ ետք, շաբաթ օր Պայերն Միւնխէն տիրացաւ երկիրի բաժակին՝ աւարտական մրցումին պարտութեան

մատնելով Պայերն Լիվըրքուզէնը 4-2 արդիւնքով: Պերլինի ողիմպիական մարզադաշտին վրայ տեղի ունեցած հանդիպումին, Պաւրիա ակումբը յաջողեցաւ տիրանալ իր պատմութեան 20-րդ տիտղոսին: Խումբը իր յաղթանակը կը պարտի մարզիչ Հանզ Տիթըրին, որ կրցաւ իր բժախնդրութեամբ բարձր մակարդակի վրայ պահել հանդիպումին ընթացքը եւ տիրապետել արդիւնքին: Հանզ եղաւ



Նաեւ գերմանացի միակ մարզիչը, որ յաջողեցաւ Նոյն խումբին հետ տիրանալ Գերմանիոյ բաժակին, որպէս խաղացող ապա՝ մարզիչ:

Ժողովիչ Բուժուեցաւ Պսակաճէ Ժահրէն


Աշխարհի արեւստավարժ թենիս խաղացող սերպիացի Նովաք ժողովիչ պսակաճէ Ժահրէն 15 օր տառապելէ ետք դարմանուեցաւ, եւ վերադարձաւ իր սովորական կեանքին: Ժողովիչն ու իր տիկինը, որոնք վարակուած էին պսակաճէ ժահրով, ենթարկուեցան յատուկ բժշկական քննութիւններու եւ մնացին հիւանդանոցի անջատ սենեակներու մէջ: Անոնք Շաբաթ օր կրկին ենթարկուեցան քննութեան, որուն արդիւնքին համաձայն դուրս եկան հիւանդանոցէն: Աւելցնենք, որ յառաջիկայ օրերուն ժողովիչ պիտի վերսկսի իր մարզումները, մասնակցելու համար յառաջիկայ մրցումներուն: Ան մինչեւ օրս ունի 17 տիտղոս:



Թիւ 15
Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:

	e	q	o	p	թ	յ	ճ	ւ	
8							♔		8
7						♟		♟	7
6		♖					♘		6
5									5
4									4
3		♙			♙			♚	3
2		♔				♙		♙	2
1							♔		1
	a	b	c	d	e	f	g	h	

Նախորդ Թիւի Պատասխանն է ♔ h 8 #
ՀԱՄԱՐՈՒՄԻ ճատրակի Յնձիւ.



ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ... Մկրտը՝ էջ 1

Հովանավորությամբ հայ երեք Համայնքապետներուն՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանին, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջ-



նորդ Արհի. Ս. Պետրոս Արք. Միրիաթեանին եւ Սուրիոյ Հայ Անտարանական Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանին, կազմակերպութեամբ Հայ Ծերանոցի մեծ ընտանիքին, Կիրակի, 5 Յունիս 2020-ին միջօրէի ժամը 1:00-ին, ԱՄՇ Տան «Անի» ճաշարահէն ներս տեղի ունեցաւ Մեծն Ներսէս Հայրապետի յիշատակի օրուան աւանդական հացկերոյթը:

Հացկերոյթին ներկայ էին Հայ երեք Համայնքապետները, ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսը, ՀՀ Մարդասիրական խումբի Հիւպատոսարանի ներկայացուցիչը եւ անձնակազմի ներկայացուցիչները, արժանապատիւ քահանայ հայրեր, առաքինազարդ քոյրեր, յարգարժան պատուելիներ, հալէպահայ ազգային, եկեղեցական, մշակութային, բարեսիրական, մարզական, հայրենակցական միութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչներ: Բացման խօսք արտասանեց Արժ. Ս. Կոմիտաս Զինյ. Տատաղեան: Քահանայ հայրը ողջունեց ներկաները, ապա փառք եւ գոհութիւն առաքեց Աստուծոյ, որ 97 տարի առաջ հայ ժողովուրդը ունեցած է այնպիսի յանձնառու անձեր, որոնք Մեծն Ներսէս Հայրապետի բարեգործական օրինակին հետեւելով հիմը դրած են Հայ Ծերանոց հանգստեան տան, որ մինչեւ օրս կը շարունակէ իր առաքելութիւնը, հայ երեք համայնքապետներուն հովանավորութեամբ:

Այս առիթով քահանայ հայրը շնորհակալութիւն յայտնեց համայնքապետներուն, որոնք միասնական յանձնառութեամբ եւ գործակցութեամբ կը շարունակեն հովանավորել մարդասիրական սուրբ գործը:

Հայ Ծերանոցի հնամակալութեան խօսքը ուղղեց հնամակալութեան ատենապետ Արժ. Ս. Խորեն Զինյ. Պերթիզեան: Քահանայ հայրը յայտնեց, որ Հայ Ծերանոցը իր առաքելութեամբ եւ ծառայութեամբ յատուկ տեղ եւ դեր ունի հալէպահայութեան կեանքին մէջ, ներկաները համարելով Հայ Ծերանոցի անդամներ, որոնք խօսքով ու մանաւանդ գործով իրենց ներդրումը

կը բերեն: Արժ. Ս. Խորեն լուսարձակի տակ առաւ Հայ Ծերանոցի խորհրդրանիշ՝ Մեծն Ներսէս Հայրապետի մարդասիրական վարքը եւ Պօղոս առաքելի նամակներէն մեջբերում կատարելով ըսաւ. «Ամէն անգամ որ Հայ Ծերանոցի առօրեային եւ առաքելութեան նայինք, անոր ընդմէջէն

պիտի տեսնենք մեր երանելի սուրբին, Մեծն Ներսէսի, պայծառ պատկերը, որ ճառագայթող ներկայութիւն է ոչ միայն պատմութեան էջե-



րուն մէջ, այլեւ այսօր եւ միշտ, այնքան անտես որ Հայ Ծերանոցը կը գոյատևէ: Հնորիւ իր նուիրեալներուն, մեր սիրելի հոգեւոր պետերուն, որոնք անմիջական հովանավորութիւնը կը վայելէ Հայ Ծերանոցը, միաժամանակ իր ողջ անձնակազմով եւ բարերարներով, որոնք իրենց այցելութեամբ եւ նուիրաբերած լուսաներով միշտ զօրավիգ կը կանգնին Հայ Ծերանոցին»:

Քահանայ հայրը սրտագին աղօթք բարձրացնելով առ Աստուած, մաղթեց, որ մեր տարեցները առողջ ու հանգիստ ապրին:

Գեղարուեստական յայտագիրով ելոյթ ունեցան հայ մշակոյթի հուրը վառ պահող երիտասարդ-երիտասարդուհիներ: Ռիթմ Կադէան-Տիքալիքեան հոգեպարար առագանութեամբ ասմունքեց «Քարտեզ» եւ «Հայրենի տուն» քերթուածները: Մարտո Տատաղեան «Հայր Իմ» երգը նուիրեց հայ երեք հոգեւոր պետերուն, «Քամանչա» եւ «Յիս Զուրիմէն Չիմ Գիտի» երգերով ներշնչեց ներկաները, ապա հացկերոյթի աւարտին ճոխ երգերով խանդավառութիւն ստեղծեց: Լիւսի Յովհաննէսեան քաղցր ձայնով մեկնաբանեց «Մախմուր Աղջիկ», «Մարալ Ջան Յեզ Արի», «Ախ Իմ Հայրենիքի Ձուրը» եւ «Սարի Սիրուն Եար» երգերը: Խաչիկ Աշճեան աշուղական շունչով մեկնաբանեց «Այսօր Ես Իմ Եարին Տեսայ» եւ «Եարը Մարդուն Եարա Կու տայ» երգերը: Երգեհոնի նուագակցութիւնը կատարեց տղթք. Ռաֆֆի Ապեճեան:

Օրուան բեմավար Արժ. Տեր Կո-

միտաս ներկայացուց Հայ Ծերանոցի յուշատետրէն փունջ մը արձանագրութիւններ, որոնց կարգին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին խօսքը եւ այս առիթով ան շնորհաւորեց Նորին Սրբութիւնը՝ իր գահակալութեան 25-ամեակին առիթով: Քահանայ հայրը շնորհաւորական խօսք ուղղեց նաեւ Գերապայծառ Տիրոջ՝ քահանայական ձեռնադրութեան 49-ամեակին առիթով:

Այնուհետեւ, Հայ Ծերանոցի տնօրէն Աւօ Գաթրճեան ներկայացուց Հայ Ծերանոցի միամեայ գործունէութիւնը, յայտնելով, որ հաստատութիւնը անմիջականօրէն կը հովանավորուի երեք համայնքապետներուն կողմէ, որոնք հայրա-



կան հոգածութեամբ ու յորդորներով եւ անոնց ներկայացուցիչներու խնամատարութեամբ աշխատանքները հետեւողականօրէն կը տարուին:

Գաթրճեան յայտնեց, որ Ծերանոցը 8 Հոկտեմբեր 2012-էն սկսեալ «Վերժին Կիւլպէնկեան» մայրանցհիւանդանոցի երկարակալ կառոյց տեղափոխուած է: Ներկայիս պատասպարեալներու թիւն է՝ 30 ծերունիներ, որոնցմէ ութը՝ հիւանդանոցային բաժնիին մէջ են:



Նկարագրելով տարուած աշխատանքները, ան յայտնեց, որ Ծերանոցի սենեակները կախարդած են ծերունիներուն անհրաժեշտ իրերով, առողջապահական խնամքը լաւագոյն կը կատարուի՝ Ծերանոցի բժիշկին անմիջական հսկողութեամբ եւ անհրաժեշտ դեղորայքի ապահովումով: 13 Մարտ 2020-էն սկսեալ պսակածե ժահրի կանխագուշակական միջոցներ սկսած են գործադրուիլ Ծերանոցէն ներս՝ կառոյցի հակաէպիտեմով, մաքրութեան պահպանումով եւ այցելութիւններու դադարեցումով:

Տնօրէնը հաստատեց, որ հակառակ տիրող դժուարին պայմաններուն, ծերունիները գուրկ չմնացին իրենց անհրաժեշտ պետքերէն, սնունդական եւ առողջապահական խնամքէն, շնորհիւ Ծերանոցի հնամակալութեան, Տիկնանց Օժանդակ Յանձնախումբին եւ ողջ անձնակազմին: Աւելցնելով ան ըսաւ. «Մեր կատարածը պաշտօնակա-

րում է, այլ՝ ծառայութիւն, նուիրում եւ մարդասիրական առաքելութիւն»:

Ապա ան երախտագիտական եւ շնորհակալական խօսք ուղղեց Սուրիոյ վսեմաշուք նախագահ Տղթք. Պաշար ալ Ասատին եւ Սուրիոյ Առաջին Տիկնանց՝ Ասմա ալ Ասատին, հայ երեք համայնքապետներուն, ՀՀ Սուրիոյ դեսպանին, ՀՀ Հալէպի Գլխաւոր հիւպատոսին, ՀՀ Մարդասիրական խումբի ներկայացուցիչին, ղեկավարութեան ու ողջ անձնակազմին, Ծերանոցի հնամակալութեան եւ Տիկնանց Օժանդակ Յանձնախումբին, հայ ժողովուրդի հեռաւոր եւ մերձաւոր կազմակերպութիւններուն ու միութիւններուն, անանուն բարերարներուն

եւ հացկերոյթի ներկաներուն՝ իրենց նիւթաբարոյական աջակցութեան համար:

Այս առիթով կատարուեցան նուիրատուութիւններ: Իշխանական նուիրատուութեամբ իրենց ներդրումը բերին նաեւ հայ երեք համայնքապետները:

Աւարտին, երեք հոգեւոր պետերուն կողմէ սրտի խօսք արտասանեց Վերապատուելի Յարութիւն Սելիմեան, փառք եւ գոհութիւն առաքելով Աստուծոյ այսօրուան հաւաքին համար: Վերապատուելի անելցնելով ըսաւ. «Այսօր հա-



մախմբուած ենք, որովհետեւ մեր արարքով եւ ներկայութեամբ կ'ունգենք տալ պատգամ մը եւ այդ պատգամը հնազանդութիւն է աստուածաշնչական տրամաբանութեան եւ քաղաքականութեան՝ «Պատուէ հայրդ եւ մայրդ, որպէսզի օրերդ երկար ըլլան»:

Վերապատուելին կոչ ուղղեց ներկաներուն չբաւարարուելու տարին մէկ օր նուիրատուութեամբ, այլ յաճախակիօրէն այցելելու ծերունիներուն:

Վերապատուելին ըսաւ, թէ որքան յարաւորութիւն ըլլան պայմանները, մենք կը պահպանենք մեր ազգային աւանդոյթները եւ հոգեւոր արժեքները:

Իր խօսքի աւարտին ան օրինեց բոլոր նուիրատուները եւ Հայ Ծերանոցի Տնօրէնութիւնը, հնամակալութիւնը, Տիկնանց Յանձնախումբը եւ ծերունիները: